

ԱԶԱՏ ՄԱԹՅԱՆ

ՈՐՆ Է ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՆ

Հեղինակային հրատարակություն

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51
Մ 155

Մաթյան, Ազատ
Մ 155 Ո՞րն է մեր հայրենին / Ա. Մաթյան.— Եր.: Հեղ. հրատ., 2021.—
80 էջ:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.51

ISBN 978-9939-0-3749-3

© Մաթյան Ազատ, 2021

Բովանդակություն

1. Ո՞րն է ժամանակակից գրական հայերենը	5
2. Կրկնաբարդաձանցավոր բանամոլություն	8
2.1. Բառապաշար առանց պարզ բառերի	8
2.2. Պարզ բառերի փոխարինումը բաղադրյալներով	9
2.3. Ակ, ունակ, ակի, իկ	36
2.4. Կեղծ բարդումներ	39
3. Կրկնաբարդոյթի տրամաբանական ավերը	42
3.1. Հարադրական բարդումներ	42
3.2. Բարդ բառով և դրա բաղադրիչներից մեկով կազմվող բառակապակցություններ	46
4. Շարահյուսական ավելադրություններ (ավելորդաբանություններ)	54
5. Գրաբարյան ձևերի սխալ գործածությունը	58
6. Հարաբերական դերանուններ.	71
7. Բարդ բառերում բայարմատի փոխարեն օգտագործվում է դերբայական ձևը.	72
8. Բայի բոլոր սեռերը կրավորական դարձնելը	73
9. Բարդ և ածանցավոր բառերը իրենց բաղադրիչներին բաժանելը	75
10. Դերանուններ	76
11. Հոլովառություն.	77

1. Ո՞րն է ժամանակակից գրական հայերենը

Լեզուն հասարակական երևույթ է, ուստի նրանում կատարվող բոլոր գործընթացները, որոնք հասարակական տարբեր շերտերի գործունեության արդյունք են, առաջացնում են լեզվական տարբերակները, և լեզուն հակիմաստաբար (պարադոքս) իր՝ միավորողի դերի հետ մեկտեղ ձեռք է բերում տարանջատողի դերակատարություն: Ահա այստեղ էլ կարիք է զգացվում հասարակական «այլախոս» շերտերին միավորող մշակված և համակարգված մի տարբերակի, որը ընդունված է կոչել գրական լեզու, որն էլ իր համընդհանրության և կանոնարկվածության շնորհիվ ստանում է պետական լեզվի կարգավիճակ:

Արդեն մեկ դարից ի վեր ՀՀ սահմանադրությունը պետական լեզու է հռչակում **հայերենը**, ի մասնավորի՝ **արևելահայ գրական լեզուն**:

Մեզանում վիպասանից և բանաստեղծից, թատերագրից ու սցենարիստից պահանջվում է գրել բացառաբար գրական հայերենով, այնինչ գեղարվեստական գրականության լեզուն և պետական գրական լեզուն ունեն տարբեր գործառույթներ և հաճախ հակադիր սկզբունքներով են առաջնորդվում: Գեղարվեստական գրականության լեզուն այն միակ տարբերակն է, որն ընդգրկում է լեզվի տեղ-ժամանակային ամբողջական տարածքը՝ առանց սահմանափակման, և, ըստ էության, այս լեզվին է վերապահված ապահովել տվյալ ազգային լեզվի շարժուն բազմաձևությունը, կենդանի բազմաձայնությունն ու ազատ զարգացումը: Իսկ պետական լեզուն նույն գրական լեզվի այն, նույնպես միակ, տարբերակն է, որն ունի պետական-պաշտոնական կարգավիճակ և ի պաշտոնե կոչված է ապահովելու լեզվական համազգային միաձևություն, հարա-

բերական կայունություն և վերահսկելի կանոնակարգված զարգացում և դրանով իսկ ծառայելու պետությանը՝ որպես նրա հիմնական գործառույթների իրականացման գործիք:

Բայց ժամանակը մեզ թելադրում է մի այլ տեսանկյունից ևս դիտարկել գրական լեզու հասկացությունը:

Մեր օրերում հասարակական հաղորդակցությունը տեղի է ունենում հիմնականում էլեկտրոնային ցանցի, ռադիոյի և հեռուստատեսության միջոցով, որոնք տիրականորեն գրոհում են գրավոր լեզվի տիրույթները՝ ի շահ բանավորի, ինչը ստիպում է հարց տալ՝ արդյո՞ք մեր գրական լեզուն և մանավանդ նրա գործածությունը պետական և պաշտոնական հարաբերություններում այսօր շարունակում է դրսևորվել հիմնականում գրավոր ձևով, թե՞, ընդհակառակը, այն հիմնականում արդեն իսկ բանավոր է: Անձամբ ինձ, ինչպես և Հայաստանով և հայկականով հետաքրքրվող շատ սփյուռքահայերի համար ոչ շատ վաղ անցյալում գրական հայերենին հաղորդակցվելու միջոցը սփյուռք առաքվող գրքերն էին և ինչ-որ չափով նաև ռադիոն, իսկ այսօր միշտ և ամենուր գերիշխող են համացանցն ու հեռուստատեսությունը: Բայց դժվարանում եմ հեռուստատեսության տարբեր ալիքներից հնչող հայերենի որևէ տարբերակ անվանել ժամանակակից գրական, առավել ևս պետական լեզու:

Խոսքս սերիալների լեզվի մասին չէ, ոչ էլ առհասարակ ժամանցային ժանրերում խոսակցական և բարբառային տարրերի, ասել է թե բանավորի թանձր, թե նոսր ներկայության, քանզի սկզբունքորեն դա համարում եմ անխուսափելի և նույնիսկ անհրաժեշտ: Խոսքս օտարաբանությունների և օտարալեզու ցուցանակների մասին էլ չէ, որովհետև դրանց մասին շատ է խոսվում, և դրանք կարելի է ամենաանմեղ շեղումները համարել գրական հայերենի այն համակարգային խեղումների համեմատությամբ, որոնց ուզում եմ անդրադառնալ ստորև:

Խոսքս հեռուստատեսությամբ հանդես եկող մտավորական խավի լեզվի մասին է՝ հաղորդավարներից մինչև նախագահն ու վարչապետը, քաղաքական մեկնաբանն ու մշակութային գործիչը

նն: Իսկ ուրիշ ումի՞ց պիտի ակնկալել մշակված և կանոնակարգված խոսքի մակարդակ, եթե ոչ հիշյալ խավից, բայց խնդրո առարկա լեզուն, բացառությունները հարգելով, ըստ իս՝ շատ հեռու է պահանջվող մակարդակից, որովհետև այս լեզուն ևս հիմնականում բանավոր է և, հակառակ եղած փորձերին, դուրս է պետական-ակադեմիական վերահսկողությունից:

Հարկ եմ համարում ավելացնել, որ նշված խառնաբանության մեջ կան և միշտ հարգելի են աղամանդի պես փայլող բացառությունները (թե ավագ և թե միջին ու երիտասարդ սերնդի խոսքի մեջ), որոնք կարող են չափանիշ հանդիսանալ կիրթ և մշակված գրական հայերենի զարգացման համար:

Ստորև բերված օրինակները, որոնք առնված են վերջին տարիների հայաստանյան հեռուստատեսության տարբեր ալիքների (<1, Շանթ...) և տարբեր մարդկանց տարաբնույթ հաղորդումներից, կարող են վկայել, որ մենք, ցավոք, գործ ունենք ո՛չ թե լեզվական պատահական վրիպումների, այլ ընդհանրացած, ուստի և համակարգային աղավաղման համաճարակի, մի տեսակ «բյուրոմեդիական» ժարգոնի հետ, որն սպառնում է անդառնալիորեն խեղել հայոց լեզվի տրամաբանական կառուցվածքը և իրեն պարտադրել որպես այդ լեզվի օրինակարգ:

Մեր գրառումները փորձել ենք դասավորել ըստ նկատված ձևաբանական, շարահյուսական, իմաստաբանական բնույթի խեղումների:

2. Կրկնաբարդաձանցավոր բանամոլություն

(Սիրելի՛ ընթերցող, թեև մեր առաջարկած լեզվախտաբանական վերոնշյալ տերմինը կազմված է մեր մայրենիի բառակերտման օրենքների ճշգրիտ կիրառությամբ և լիովին արտահայտում է խնդրո առարկա երևույթի բովանդակությունը, բայց, ինչպես տեսնում եք, մի քիչ երկար է ստացվել, ուստի առաջարկում և այսուհետ օգտագործելու ենք դրա ամփոփ տարբերակը՝ «ԿՐԿՆԱԲԱՐԴՈՒՅԹ» ձևը): Ուրեմն.

2.1. Բառապաշար՝ առանց պարզ բառերի

Այս երևույթի գլխավոր հատկանիշն այն է, որ խոսողները, զարմանալի հետևողականությամբ և համերաշխությամբ հրաժարվում են պարզ բառերից՝ դրանց փոխարեն օգտագործելով բարդ կամ ածանցավոր ձևեր: Ավելին, նրանք այնքան են տարված այս «կրեատիվ» մոզությամբ, որ հաճախ անհարկի բարդում և ածանցում են արդեն իսկ բարդ և ածանցավոր բառերը: Սրա նվազագույն վնասն այն է, որ հայոց լեզուն զրկում է բառապաշարի հիմքը հանդիսացող պարզ բառերից, դժվարացնում է լեզվի ընկալումն ու յուրացումը, հաճախ էլ խախտում է լեզվի տրամաբանական կառույցը:

Հայերենը, այո՛, հարուստ լեզու է: Դրա ապացույցներից մեկն էլ բարդման և ածանցման միջոցով նոր բառեր ստեղծելու հնարավորությունն է, որի չարաշահումը, սակայն, աղետաբեր է: Բարդման և ածանցման շնորհիվ բառապաշարը հարստանում է. ստեղծվում են նոր բառեր, որոնք, ըստ էության, պիտի արտահայտեն նոր բովանդակություն, հակառակ դեպքում դրանք լեզուն միայն ծանրաբեռնելու են անբովանդակ ուռձացումով, ինչից և տառապում է ժամանակակից հայերենի խնդրո առարկա տարբերակը:

Բայց անցնենք փաստերին:

2.2. Պարզ բառերի փոխարինում բաղադրյալներով

«Ագույն»–ի գլխին եկածը

Սկսելու համար հարկ եմ համարում հիշել նախակրթարանը. Ա–ն ուժեղ է, Բ–ն ավելի ուժեղ է, իսկ Գ–ն ամենաուժեղն է կամ ուժեղագույնն է: Այո՛, խոսքը ածականի համեմատության կամ բաղդատական երեք աստիճանների մասին է, որոնցից առաջինը, այսինքն՝ «ուժեղ»–ը վտարվել, և նրա տարածքը «օկուպացրել է» «ուժեղագույն»–ը: Այս «դարվիյան» օրենքի տրամաբանությամբ Հայաստանում այլևս ուժեղներ չկան, որովհետև բոլորը ուժեղագույն են: Իսկ ավելի լուրջ՝ **պարզ** ածականի դրական աստիճանը **ագույն** ածանցով կազմվող գերադրական աստիճանով փոխարինելու երևույթը դարձել է համատարած: Տպավորությունն այն է, որ խոսողների գիտակցության մեջ **ագույն** ածանցը նույնացվել է **գույն** անվան հետ, ինչպես. կապտագույն, երկնագույն, այնպես էլ լավագույն (լավի գույն ունեցող), մեծագույն (մեծի գույն ունեցող) են:

Լավ – լավագույն

«Սա միակ լավագույն գործարքն է»:

Եթե լավագույնն է, ուրեմն տրամաբանորեն միակն է, ուստի միակ բառը ավելորդ է, և պետք է ասել «Սա լավագույն գործարքն է»: Իսկ եթե միակն է, ուրեմն համեմատության եզր ունենալ չի կարող, և պիտի ասել. «Սա միակ լավ գործարքն է»: Սխալը ծագում է այնտեղից, որ խոսողը **լավ**–ի փոխարեն օգտագործել է դրա ածանցված **լավագույն** ձևը:

Կարևոր – կարևորագույն

«Եվ վերջապես մյուս կարևորագույն խնդիրը...»

Կարևորագույն լինում է միայն մեկը, և մյուս կարևորագույն լինել չի կարող. այստեղ նույնպես զուտ սովորույթի թելադրանքով

կարևոր պարզ ածականի փոխարեն գործածված է ածանցավոր ձևը:

«Մեր կարևորագույն գերխնդիրը...»: Եթե գերխնդիր է, ուրեմն կարևորագույն է, քանզի **ագույն** և **գեր** ածանցները համանիշ են և ունեն գերադրական իմաստ, ուստի պիտի ասել՝ **մեր կարևորագույն խնդիրը** կամ **մեր գերխնդիրը**:

«Մեր ամենակարևորագույն առաջնահերթությունը»

Այստեղ սխալը բարդվել է սխալի վրա, որովհետև **ամենա** և **գույն** համանիշ ածանցները համատեղ օգտագործվել են միևնույն բառի մեջ. պետք է ասել մեր «ամենակարևոր» կամ մեր «կարևորագույն», իսկ առաջնահերթությունը, թեև ընդունված է նաև հոգնակի ձևը, սակայն տրամաբանորեն եզակի է և կարևորագույն: Բավական էր պարզապես ասել **մեր առաջնահերթ խնդիրը** և խոսքը փրկել հինգ ավելորդ վանկերի բեռից:

«Դա բացառիկ կարևորագույն խնդիրներից մեկն է»

Խոսողը, տրվելով չափազանցելու իր անդիմադրելի մղումին, մտահան է արել, թե՛ բացառիկ բառի, թե՛ բացառական հոլովի և թե՛ գերադրական ածականի իմաստները: Այն, ինչ բացառիկ է, ուրեմն եզակի է և ոչ համեմատելի, ուստի կարելի է միայն ասել. «Դա բացառիկ կարևորության խնդիր է» կամ «Դա կարևոր խնդիրներից մեկն է»:

«Ինչպիսի՞ հանդիպումներ եք ունեցել որևէ կարևորագույն հայի հետ» (Արտյոմ Երկանյան)

Կրկնենք, որ կարևորագույն հայ (եթե այդպիսին կա, կամ ընդհանրապես հնարավոր լինի պատկերացնել) կարող է լինել միայն մեկը, այնինչ «որևէ հայ» կապակցությունը տվյալ դեպքում կարծես ենթադրում է՝ բոլոր հայերից յուրաքանչյուրը: Պիտի ասել «որևէ կարևոր հայի հետ», բայց ո՛չ, քանզի անխափան գործում է պարզ բառերից հրաժարվելու համազգային կուռ դաշինքը՝ հայրենի մտավորական խավի գլխավորությամբ:

«Անցյալ շաբաթ երկու կարևորագույն իրադարձություն տեղի ունեցավ...» (24 հաղորդավար)

Մխալը բազմապատկվում է, երբ **ագույն** ածանցով գերադրական ձևը, առնվելով որպես պարզ բառ, ենթարկվում է կրկնակի և եռակի ածանցման:

«Դա ամենալուջագույն խնդիրներից մեկն է»:

Պիտի ասել՝ դա շատ լուրջ խնդիր է, դա լուրջ խնդիրներից մեկն է կամ դա ամենալուրջ խնդիրն է:

Վատ – վատագույն – ամենավատագույն – վատթար – վատթարագույն

«Չէի ասի, որ դա ամենավատագույն տարբերակ է»:

Կրկին՝ հիշեցման կարգով. բարդումը և ածանցումը նոր բառեր ստեղծելու միջոցներ են, իսկ նոր բառը անպայման ենթադրում է նոր բառիմաստ: Հակառակ դեպքում բարդումը և ածանցումը դառնում են անիմաստ: Բերված օրինակում **ամենա** և **ագույն** մասնիկներից միայն մեկով **վատ** ածականը ստանում է գերադրական աստիճան, իսկ երկուսը միասին բառին ոչ մի նոր իմաստ չեն հաղորդում, որովհետև նույն իմաստն են արտահայտում: Պետք էր ասել. «Չէի ասի, որ դա վատ տարբերակ է», «Չէի ասի, որ դա ամենավատ տարբերակն է», «Չէի ասի, որ դա վատագույն տարբերակն է»:

«Այդքան էլ վատթարագույն սցենար...»

«Վատթար»-ը արդեն իսկ **թար** ածանցն է կրում և նշանակում է ավելի վատ, բացի այդ՝ այստեղ խոսքը միայն մեկ սցենարի մասին է, և չկան այլ համեմատելի սցենարներ. խոսողը ուզում է ասել. «Այդքան էլ վատ սցենար», բայց «վատ»-ը ընդամենը պարզ բառ է և սազական չէ ժամանակակից «զարգացած» հայերին:

Ինչպես տեսնում եք, այնքան էլ հեռու չենք *ամենավատթարագույնից*:

Մեծ – ամենամեծ – մեծագույն – ամենամեծագույն

«...Միրիան Պողոսյանին առաջադրված մեղադրանքի հիմքում քաղաքական բաղադրիչ փնտրել նույնիսկ ցանկության դեպքում հնարավոր չէ» (մեկնաբան):

Անպայման – անպայմանորեն

«Եթե կինը հիվանդ է, ուրեմն նա անպայմանորեն պիտի բուժվի» (բժիշկ):

«Խորհմաստ» խոսքը ո՛չ թե անպայման, այլ անպայմանորեն պահանջում է «ձանրակշիռ» խոսք:

«Մենք պիտի անպայմանորեն կարողանանք անդրադառնալ այս խնդիրներին անցումային արդարադատության շրջանակներում» (Արարատ Միրզոյան):

Հարմար – հարմարավետ, անհարմարավետ

«Պատահական չէ, որ ես ինձ անհարմարավետ եմ զգում»:

Խոսողի մտքինը «անհարմար եմ զգում» ծանոթ դարձվածքն է, սակայն ինչ–որ անդիմադրելի ուժ նրան հուշում է հարմար պարզ բառը միաժամանակ օժտել **ան** նախածանցով և **ավետ** վերջածանցով՝ ստանալով անհեթեթություն: **Ավետ** վերջածանցը տվյալ առարկան օժտում է դրական հատկանիշով, իսկ **ան** նախածանցը ունի բացասական իմաստ, և երկուսը միատեղ չի կարելի օգտագործել, ինչպես չի կարելի ասել անբուրավետ, անթիկնավետ, անշնորհաշատ են: Իհարկե, լեզուն ունի նաև իր քմահաճույքները. հայոց լեզվի հանգաբառարանում կա **ավետ** ածանցով 30 բառ, որոնցից 3–ը ունեն նաև **ան** նախածանց՝ անօգտավետ, անշահավետ, անհոտավետ, որոնցից պետք է խուսափել, ինչպես «կորոնա» վիրուսից:

Մյուս կողմից՝ հարմարավետը պարագայական իմաստ ունի, և մարդը չի կարող լինել կամ ինքն իրեն զգալ հարմարավետ, առավել ևս անհարմարավետ: Նա կարող է զգալ անհարմար վիճակում կամ ապրել ոչ հարմարավետ բնակարանում: Նույնն է կենդանու պարագան, չի կարելի ասել «...որպեսզի կենդանիները իրենց հարմարավետ զգան» (կենդանաբանական այգու աշխատակից), որովհետև կենդանիները չեն, որ պիտի լինեն հարմարավետ, այլ նրանց կենսապայմանները:

Փոքրիկ սխալը, ինչպես ասում են, և գիտեք, հանգեցնում է նոր և միշտ ավելի մեծ սխալների: Այդպես է նաև, երբ «հարմար» պարզ բառը դուրս ենք թողնում մեր լեզվից, և... լսեք.

«Բնակարանը օժտված է բազմաթիվ հարմարավետություններով»:

Պիտի ասել **հարմարություններով**:

Ծանրություն – ծանրաբեռնվածություն

«...Իր վրա վերցնել մարտի 1-ի ամբողջ ծանրաբեռնվածությունը»:

Ոգում է ասել բեռը, ծանրությունը, պատասխանատվությունը, պատասխանատվության ծանրությունը... կարևորը բառի ծանրաբեռնվածությունն է...

Երդում – երդմնակալ – երդմնակալություն

«...Տեղի ունեցավ նորընտիր նախագահի երդմնակալության արարողությունը»:

Երդմնակալությունը հենց երդման արարողությունն է, ուստի բավական է ասել՝ երդման արարողությունը՝ խնայելով երկու ածանց, 3 վանկ՝ 9 տառ:

Խորհուրդ – խորհրդավոր – խորհրդավորություն

«...Ծածկված է խորհրդավորության մշուշով»:

Սա էլ, հարկ չկա ասելու, բանաստեղծ է և չի կարող բավարարվել **խորհրդի** կամ **խորհրդավոր** մշուշով, ինչը, հասարակ մահկանացուիս կարծիքով, լիուլի բավական է: Բայց «կրկնաբարոյթը» թելադրում է իր անկասելի օրենքները, որոնցից մեկն էլ «ություն»-ի չարաշահումն է:

Ամպ – ամպամած – ամպամածություն

«Արբանյակային լուսանկարի վրա դուք տեսնում եք ամպամածության կուտակումները» (հաղորդավար):

Լուսանկարում մենք տեսնում ենք ամպերի կուտակում, որին հենց ասում ենք ամպամածություն, բայց ո՛չ ամպամածության կուտակումներ:

Եկամուտ – եկամտաբեր – եկամտաբերություն

«Այդ եվրոբոնտների եկամտաբերությունը կազմել է 6,5 %»

(Ն. Փ., վարչապետ):

«Մեր բիզնեսը այսօր մեծ եկամտաբերությամբ չի աշխատում»:

«Կորոնավիրուսը...բերում ա եկամտաբերության նվազեցման»:

Շահ – շահաբեր – շահաբերություն

«...շատ շահաբերություն չունի»:

Իսկ ինչո՞ւ չասել՝ շահաբեր չէ կամ շահ չունի:

Օրենք – օրենսդիր – օրենսդրություն

«...որոնք (ոմանց) տրամադրվել են օրենսդրության պահանջների խախտումով»:

«Օգոստոսի 15-ից օրենսդրության պահանջը կմտնի ուժի մեջ»(ԱԺ պատգամավոր):

Օրենսդրությունը օրենքներ ստեղծելու գործողությունն է, օրենքների ամբողջությունը. այստեղ ավելորդ է նաև **պահանջների բառը**: Բավական էր ասել «օրենքի խախտումով» և «օրենքը կմտնի ուժի մեջ» և խնայել մի դեպքում 16 տառ՝ 6 վանկ, իսկ երկրորդ դեպքում՝ 13 տառ՝ 5 վանկ:

Ջգույշ – զգուշություն – զգուշավորություն

«Հարկավոր է առավել զգուշավորություն ցուցաբերել»:

Ուզում է ասել՝ պետք է ավելի զգույշ լինել:

Մեղք – մեղավորություն – մեղսագործություն

«Դա իմ մեղավորությունն էր»:

Պիտի ասել՝ դա իմ մեղքն էր, դա իմ մեղքով էր, մեղավորը ես էի:

«Ինչ-ինչ շահագրգիռ ուժեր, որոնք սովորություն ունեն իրենց գործած նախկին մեղսագործությունները ծածկել... թաքցնել էլ անունների տակ՝ եկեղեցի, ազգ, հայրենիք ևն.» (Ազատություն TV, Վահրամ Թոքմաձյան, ուսուցիչ):

Իսկ ինչն է խանգարում գործած մեղսագործություններ-ի փոխարեն ասել՝ գործած մեղքերի՝ խուսափելով գործ բառի կրկնությունից և խնայելով 4 վանկ՝ 12 տառ:

Պատիվ – պատվարժան – արժանապատիվ – արժանապատվություն

«...Ընտրությունների արժանապատվությունը...»:

Բավարար կլիներ պատիվ պարզ բառը, որով խոսքը կբեռնաթափվեր 4 ավելորդ վանկերից: Ընդհանրապես սխալ է ընտրված պատիվ հասկացությունը այն պարզ պատճառով, որ պատիվը, առավել ևս արժանապատվությունը մարդուն հատուկ բարոյական հասկացություններ են և չեն կարող վերագրվել ընտրություններին:

Գործ – գործունեություն

«Հենրիկ Մխիթարյանը միշտ էլ աչքի է ընկել հայանպաստ իր քաղաքացիական գործունեություններով»:

Դիտի ասել՝ գործերով կամ գործունեությամբ:

Պայման – նախապայման – պայմանավորվածություն – անպայմանորեն

«Մեր պայմանավորվածությունը ուժի մեջ ա...»

Ոչինչ չի խանգարում ասելու՝ մեր պայմանը ուժի մեջ է: Ընդհակառակը, դա մեզ կազատի հինգ վանկ՝ 12 տառի ավելորդ քաշից, իսկ խնդրո առարկա լեզուն քաշաթափման կարիք շատ-շատ ունի:

Համեմատենք նաև. «Նրանք պայմանավորվել են» և «Նրանք պայմանավորվածություն են ձեռք բերել» նախադասությունները: Երկրորդը 5 վանկ՝ 14 տառ ավելի ծանր է կշռում, բայց ոչ բառիս փոխաբերական իմաստով:

Տրամադրություն – տրամադրվածություն

Ինչն է հարկադրում արդեն իսկ երեք մասից բաղկացած ածանցավոր բառը ծանրաբեռնել ևս մեկ «ված» ածանցով, եթե ոչ «կրկնաբարդույթ» կոչվող վարակը.

«Հայկական կողմը բանակցություններին մասնակցում է բացառապես կառուցողական տրամադրվածությամբ», «...պայմանավորված է մարդու տրամադրվածությունից»:

Բայց ինչո՞ւ ոչ տրամադրությամբ. խոսողը ակնհայտորեն բավականաչափ հայերեն չգիտի և գործիական հոլովի փոխարեն գործածել է բացառական հոլով՝ մտքում հավանաբար ունենալով «կախված է մարդու տրամադրությունից» ձևը:

«...Եվ այդ միջավայրով, նաև այդ սիմվոլներով է ստեղծվում տրամադրվածություն» (Ն.Փ., վարչապետ):

Բայց ինչո՞ւ ոչ տրամադրություն:

«...Ինչ տրամադրություն ունեն, ի՞նչ տրամադրվածություն ունեն...» (ArmNEWS)

Ուղղություն – ուղղվածություն

«Սա թուրք-ադրբեջանական քաղաքականության հիմնական ուղղվածություններից, ուղղություններից մեկն է» (Արման Նավասարդյան, AD TV, May 2, 2019):

Պր. Արման Նավասարդյանը, անդրադառնալով իր սխալին, ակնհայտորեն շտապում է ուղղել այն. սա ցույց է տալիս, որ նույնիսկ լեզվական ամենաառողջ օրգանիզմներն էլ պաշտպանված չեն «կրկնաբարդույթի» վարակից:

Հետևյալ օրինակում մենք տեսնում ենք հակառակ երևույթը. հաղորդավարը, որ ավելի երիտասարդ սերնդի ներկայացուցիչ է, նախ գործածում է ճիշտ ձևը, բայց անմիջապես, կարծելով, որ այդ ճիշտը արդեն «կոպիտ սխալ» է, «ուղղում է» ինքն իրեն:

Շահագրգռություն – շահագրգռվածություն

«...Չունենալով նյութական որևէ շահագրգռվածություն...».
«ված»–ը ավելորդ է:

Ներկայություն – ներկայացվածություն

«Բնական է, որ քաղաքացիական համակարգում ազդեցիկ ինչ–որ ներկայացվածություն պիտի ունենա նաև ընդդիմությունը»:

Չէ, սա արդեն շատ ծանր է վարակված «կրկնաբարդույթով»:

Կաշկանդում – կաշկանդվածություն

«Մենք ոչ մի բանով կաշկանդվածություն չունենք» (ԱԱԾ պաշտոնյա): «Ուրություն»–ը ավելորդ է: Ավելի սեղմ ձևերն են՝ **կաշկանդում չունենք կամ կաշկանդված չենք:**

«...Մեր երկրի տնտեսական զարգացածությունը...» (Նիկոլ Փաշինյան):

Պայման – պայմանավորվել – պայմանավորվածություն

«...Նախարարներին հաջողվեց պայմանավորվածություն ձեռք բերել»:

Գոյություն – գոյատևություն

«Այդ ողբալի միջադեպը վկայում է Իսլամական պետության շարունակվող գոյատևության մասին»:

Պիտի ասել շարունակվող գոյության կամ միայն գոյատևման:

Տեղեկություն – ապատեղեկատվություն

«Տարածում էր այնպիսի ապատեղեկատվություններ ...»

Ապատեղեկատվություն բառը, ըստ երևույթին, գործածվում է անձիշտ կամ կեղծ լուր (fake news) իմաստով, ինչը սխալ է, որովհետև **ապ(ա)**–ը ժխտական ածականակերտ նախածանց է, որը

բառը վերածում է իր հականիշ ածականին, ինչպես՝ շնորհալի, ապաշնորհ, ուշիմ–ապուշ, ևն, մինչդեռ **ապատեղեկատվությունը** գոյական է, այն էլ հոգնակի թվով: Եվ զարմանալ կարելի է, թե խոսողը ինչպես է տրամադրվում արտաբերել այս ինքնանկանոց անհեթեթությունը **սուտ լուրեր** երեք վանկի փոխարեն. թողնենք, որ «սուտ»–ի փոխարեն գործածում են նաև «ստահող» կրկնաբարդույթը:

Չափ – չափորոշիչ

«Նայած ինչ չափորոշիչներով է դա արտահայտվում»:

Չափորոշիչը այն միավորը կամ սկզբունքն է, որով չափում են, գնահատում և ոչ թե արտահայտում: Այստեղ այն բոլորովին անարդարացի, չասենք ցինիկաբար, նստել է **չափ** միավանկ բառի տեղը:

Ժամանակ – ժամանակահատված

«Ինչքան ժամանակահատված է հարկավոր...»

«...Կգա ժամանակահատված, երբ...»

«Խորհրդային ժամանակահատվածից հետո...»

«Գոնե երեք տարի ժամանակահատվածով...»

Բերված բոլոր օրինակներում էլ ժամանակ պարզ բառը լիովին բավական է:

«Ներկայիս ժամանակահատվածում» (24–ի հաղորդավար):

Ներկայիս արդեն նշանակում է ներկա ժամանակում, ուստի ժամանակ բառը այստեղ ընդհանրապես ավելորդ է, իսկ հատվածում–ը՝ առավել ևս, որովհետև այն ենթադրում է որոշակի սկիզբ և վախճան ունեցող համեմատաբար կարճ ժամանակ, իսկ «ներկա» հասկացությունը չունի այդ որոշակիությունը: Մեղավորը, իհարկե, **ժամանակ** բառի «սակավավանկ» լինելն է:

Ջուր – ջրամատակարարում

«...Նոր ցանցով արդեն ջրամատակարարումը ստանում են»:

Այսինքն՝ ինչպե՞ս, մարդիկ ջրամատակարարման ցանցի միջոցով ջրամատակարարում են ստանում, թե՞, պարզ սասած, հենց ջուր:

Կառույց, կառուցում – կառուցապատում – կառուցակարգ

Կառույցը շենքն է, կառուցումը՝ կառուցելու գործողությունը, իսկ կառուցապատումը նույնպես գործողություն է, բայց այս բարդության մեջ գլխավոր իմաստակիր մասնիկը **պատել** բայն է և ոչ թե կառույց անունը, ուստի բառը առավելաբար միտված է տարածքին, որը պատվում է կառույցներով, օր.՝ «Քաղաքի կանաչապատ տարածքները կառուցապատելը օրենքով արգելվում է»:

Սխալ է, երբ «կառուցապատում»-ը օգտագործվում է «կառույց»-ի կամ «կառուցում»-ի փոխարեն, օր. «Կառուցապատումների ծավալները...»:

Պիտի ասել կառույցների ծավալը կամ կառուցապատված տարածքները: Ականջ է ծակում նաև այս երկու բառերի, հատկապես «ծավալ»-ի հոգնակին: Չի ասվում «Կառուցապատումների ծավալները...», ինչպես չի ասվում՝ տուրիստների թվերը, մրգերի քանակները, շենքերի բարձրությունները, բեռների կշիռները ևն: Ավելի ճիշտ կլինի խոսել տվյալ տարածքում (հողամաս, փողոց, շրջան, քաղաք ևն) կատարված կառուցապատման ծավալի մասին:

«Երկրում գործելու է ՍԴ-ի նոր կառուցակարգ»:

Կառույցը և կարգը այստեղ համարյա նույն բանն են նշանակում, և նրանցով կազմված բարդ բառը կեղծ բարդություն է. պիտի օգտագործել կամ **կառույց**, կամ **համակարգ**:

Պայման – նախապայման

«Առաջին նախապայմանը ...»:

Նախապայմանը նշանակում է հենց առաջին պայման, և դրանք երկուսն էլ եզակի հասկացություններ են, այսինքն՝ երկրորդ նախապայման գոյություն ունենալ չի կարող, ինչպես որ երկրորդ առաջին պայման տրամաբանորեն հնարավոր չէ: Այս տարածված սխալը հետևանք է այն բանի, որ **պայման** պարզ բառը իր տեղը զիջել է **նախապայման**-ին:

Պատրաստել – նախապատրաստել

«Այսօր մեր սցենարիստին խնդրեցինք նախապատրաստել հետևյալ թեման»:

Հաղորդավարը պատրաստել պարզ բառի փոխարեն օգտագործում է նախապատրաստել ածանցավոր բառը, որի կարիքը

չկա, և որը տրամաբանորեն սխալ է, որովհետև թեման չեն նախապատրաստում, այն մշակում են:

Օրինակել – կրկնօրինակել

«Երեխաները կրկնօրինակում են իրենց ծնողներին»(հոգեբան):

Իսկ մեր հարգելի հոգեբանը տառապում է «կրկնաբարդոյթով»:

«Էնտեղի մշակույթից ինչը կարելի է կրկնօրինակել» (հաղորդավար):

Եթե առաջին նախադասության մեջ կրկնօրինակելը ինչ–որ չափով հասկանալի է, թեև օրինակելը լիովի բավական է, ապա երկրորդի մեջ այն ամենևին էլ իր տեղում չէ, որովհետև խոսողը իրականում ուզում է պարզել, թե խնդրո առարկա մշակույթի մեջ խոսակիցը ինչն է համարում օրինակելի, այլապես ամեն ինչ կարելի է կրկնօրինակել: Բայց նորից հիշեցնենք, որ այստեղ մեր խոսքը ոչ թե իմաստաբանության մասին է, այլ «կրկնաբարդաձանցավորաբանամոլության» (կրկնաբարդոյթի):

Վիճակ – իրավիճակ – կարգավիճակ

«Նրա պատճառով է, որ ես այս ողորմելի կարգավիճակում եմ հայտնվել»:

Խոսողը թքած ունի վիճակ և կարգավիճակ բառերի իմաստային–ոճական տարբերության վրա. նա տառապում է «կրկնաբարդոյթով» (բարդաձանցավորաբանամոլության ախտով):

Տոչակել – հանրահոչակել

Տոչակը արդեն հանուր է լինում, հետևաբար հանրահոչակել բառը «բարդաձանցավորաբանամոլության» համաճարակի ծնունդ է:

Հայտարարել – հայտագրել – հայտարարագրել

«Քաղաքացիները պետք է հայտարարագրեն իրենց եկամուտները»: Հայտարարել կամ հայտագրել բառերը լիովին արտահայտում են միտքը, բայց «համաճարակը» մղում է ընտրելու հնարավոր բաղադրություններից ամենաներկարը:

Անջատել – տարանջատել

«Հայոց եկեղեցու պատմությունը չի կարելի տարանջատել Հայաստանի պատմությունից» (Ն. Փ.) Իսկ անջատել...

Հաջող – հաջողված

Հաջողված բառը լայնորեն օգտագործվում է **հաջող** իմաստով:

«Ես կարծում եմ, որ առաջարկվածը շատ հաջողված ծրագիր է»
(Կ. Կ., վարչապետ):

Խոսքը դեռևս չգործադրված ծրագրի մասին է, և չի կարելի ի սկզբանե այն որակել հաջողված, իսկ սխալը բխում է **հաջող** պարզ բառի փոխարեն դրա բաղադրյալ ձևը օգտագործելու համաճարակից:

Նպատակ – նպատակադրում

«Հարց է ծագում՝ ինչքան են այդ ուղղությունները համապատասխանում մեր քաղաքական նպատակադրումներին» (Ն. Փ., վարչապետ):

Բայց ինչո՞ւ ոչ նպատակներին:

Անմիջապես ուղղում է, բայց սա փաստում է, որ «կրկնաբարդաձանցավորման» վարակը սպառնում է նույնիսկ մտավորական վերնախավին:

Հատուկ – յուրահատուկ – առանձնահատուկ

«Ուզում եմ յուրահատուկ շնորհակալություն հայտնել...»

Դժվար է կռահել շնորհակալության յուրահատկությունը, բայց, եթե չեմ սխալվում, խոստղը ուզում է ասել **հատուկ** կամ **հատկապես**:

«Ես առանձնահատուկ կարևոր եմ համարում կրկին ու կրկին ընդգծել...» (Ն. Փ., 5-րդ համագումար):

Բայց գուցե ասենք **առանձնապես** կամ **հատկապես**, որոնք մակբայ են և ավելի հաջող կկատարեն ձևի պարագայի իրենց դերը, քան թե առանձնահատուկը, որ ածական է և ոչ այնքան հաջող բաղադրություն, որովհետև կազմված է առանձին և հատուկ բառերից, որոնք գրեթե նույնիմաստ են, և յուրաքանչյուրը կարող է միայնակ կատարել բաղադրության դերը:

«Ուզում եմ ասել, որ խոսքը առանձնահատուկ այն ձեռնարկությունների մասին է, որոնք, այսպես ասած, հումքից ստանում են վերջնական արտադրություն»:

Առանձին – առանձնակի – առանձնահատուկ

«Երեխաները առանձնակի ուշադրության են արժանի»:

«Վարակը» թելադրում է ամեն գնով խուսափել հատկապես պարզ բառերից՝ ի շահ բարդ ու ածանցավոր անհեթեթության:

«...Ի հավելումն ձեր ասածի՝ կուզենայի նաև, իրոք, առանձնահատուկ շեշտել՝ մեր հանրապետության տարածքում և Երևան քաղաքում կան էդպիսի առանձնահատուկ հուշարձաններ...» (Մակունց, մշակույթի նախարար):

«Ուզում եմ յուրահատուկ շնորհակալություն հայտնել»: Սա էլ է «վարակված», այլապես հատուկ շնորհակալությունն էլ լիովի բավական էր:

Փաստ – փաստարկ

«Արձանագրեցի, որ կա մի շատ կարևոր և շատ արդարացի փաստարկ, որ մենք երբեք ժողովրդի լեզուի մեջ քվեն ստացած սահմանադրություն չենք ունեցել, սա փաստարկ է» (Ն. Փ.):

Ոչ մի պատճառ չկա «փաստ»-ի փոխարեն օգտագործելու «փաստարկ»-ը, մանավանդ երկրորդ պարագայում, որը անհարկի ձևափոխումն է «դա փաստ է» հոնտորական բառակապակցության:

Դեր – դերակատարում

«Վստահ եմ, որ այս ձգնաժամային իրավիճակում նա կկատարի իր առանցքային դերակատարումը»: Պիտի ասել **դերը**՝ խուսափելով **կատարել** բայի կրկնությունից և 4 ավելորդ վանկից:

«Ես կարծում եմ՝ մեզ այս հարցում առանձնահատուկ դերակատարում է վերապահված՝ լինել օրինակ այսօրվա և վաղվա քաղաքական ուժերի համար» (Լ. Ն., ԱԺ խոսնակ):

Բայց ինչո՞ւ **դերակատարում**, և ոչ **դեր**, չէ՞ որ ձեզ վերապահվածը «առանձնահատուկ դեր» է (գործողություն) և ոչ թե ինչ-որ հանրահայտ դերի առանձնահատուկ կատարում: Հետո էլ արժե՞ արդյոք մի կոպիտ սխալի վրա վատնել չորս վանկաչափ էներգիա:

Լսել – ականջալուր լինել

«Առաջին անգամ այդ մասին ականջալուր եղա...»: **Ականջալուր եղա**-ն, իհարկե, 3 վանկով և 6 տառով ավելի ծանրակշիռ է, քան **լսեցի**-ն:

Նոր, նորընտիր – նորաթուխ

«Նորաթուխ պատգամավոր», «նորաթուխ հայր», «նորաթուխ ուսանողներ»... Որքան գիտեմ, թխելը մեր լեզվում օգտագործվում է հեզնական իմաստով, օրինակ՝ «թխած բանաստեղծություն», և չեմ ուզում հավատալ, որ հիմա Հայաստանում ամեն ինչ չէ, որ կարող է լինել թխովի:

Միջև – միջակայքում

«Ծիրանի գինը տատանվում էր 400–500 դրամի միջակայքում»: Իսկ միջև–ը բավական չէ:

Մանր – մանրակրկիտ

«Կերակուրը պիտի մանրակրկիտ ծամել»: Առանց մեկնաբանության:

Ընտիր – հատընտիր

«...Կհամոզվեք, որ հատընտիր տղմա ունենք» (գովազդ):

«Ես օգտագործում եմ «Տոսքանա» պահածոները, որովհետև դրանք բոլորը հատընտիր են և...»:

Այստեղ տղմայի և պահածոների տեսականին նույնացվել է բանաստեղծության հետ. ճաշակի խնդիր է:

Խնդիր – հիմնախնդիր

«...Քննարկեցին Սևանա ձկի հիմնախնդիրը»:

Եթե ուշադրություն դարձնեք, կարձանագրեք, որ «կրկնաբար-դոյթով» տառապողների համար Հայաստանում այլևս չկան խնդիրներ. ամեն կողմ ու ամեն տեղ միայն հիմնախնդիրներ և գերխնդիրներ են:

Նորոգել – վերանորոգել – հիմնանորոգել

«...Մենք չգիտենք՝ մանկապարտեզը փակվել է հիմնանորոգման պատճառով, թե՛...» (Անահիտ Բախշյան):

Բերված օրինակում խոսողը չգիտի, թե ինչու է փակվել մանկապարտեզը, միայն ենթադրում է, որ դա նորոգության նպատակով կարող է լինել, հետևաբար կարիք չկա, և տրամաբանական չէ որոշել նորոգության տեսակը, առավել ևս, որ խոսքը շինարարական ենթատեքստից դուրս է: Ավելացնենք, որ հայոց լեզվի հոմանիշնե-

րի բառարաններում (վերջինը 2009 թ.) «հիմնանորոգել» բառը չգտանք, ամենամոտ հոմանիշը «վերանորոգել»–ն է, հետևաբար այն կարելի է համարել նորաթուխ բառ, որը նշանակում է հիմնովին նորոգել, ինչը ամենևին էլ վատ չէ, վատն այն է, որ այս **նորաթուխ** բարդ բառը եկել է ամբողջապես փոխարինելու **նորոգել** պարզ բառին: Դե, իհարկե, չէ՞ որ Հայաստանում ամեն ինչ միայն հիմնանորոգվում է, այդ թվում և հայոց մեծաքանչը:

Պատվեր – պատվիրել – պատվիրակել

«Մենք այս հարցերի քննարկումը, ինչ–որ տեղ և ուղիղ տեքստով պատվիրակել ենք նաև մեր արտաքին գործոց նախարարին» (Ն. Փ., ՀՀ վարչապետ):

«Բանակի սննդի պատվիրակումը տրվել է մասնավոր բաժնին»:

«...Ռուսական մամուլում հայտնվեցին ակնհայտորեն պատվիրակված հոդվածներ...» (Արմեն Վարդանյան, 1in TV)

«Արտգործնախարարներին հանձնաժողովի անունից նաև պատվիրակեցինք աշխատել այդ ուղղությամբ» (Ռուբեն Ռուբինյան, պատգամավոր):

«Պատվիրակել» բառը բառարաններում չգտանք, և թե ինչու է այն օգտագործվել պատվիրել բառի փոխարեն, չհասկացանք: Ունենք պատվիրակ բառը, որ նշանակում է ներկայացուցիչ:

Նորբ – նրբանկատ

«... Սա շատ նրբանկատ խնդիր է...» (Նորայր Նորիկյան, փաստաբան): Նրբանկատ կարող է լինել միայն մադր:

Հավաքել – հավաքագրել

«Բյուջեի համար լրացուցիչ գումար է հավաքագրվելու»:

«...Ընտրապայքարի համար կես միլիոն դոլար է հավաքագրել»:

«Այդ գումարը հավաքագրվել է վերջին մեկ ամսվա ընթացքում»:

Հավաքագրում են միայն մարդկային նոր ուժեր հատուկ գործի համար, իսկ դրամի կամ այլ բաների պարագային հավաքելն էլ բավական է, և ինչո՞վ է գերադասվում այս բարդ բառը «հավաքել» պարզ ձևին:

Արգելել – արգելափակել

«Որոշ կարգավորումներ կան, գուցե, հնից եկող, որ արգելափակում են ինչ–ինչ անցանկալի, Ռուսաստանի համար անցանկալի մարդկանց մուտքը երրորդ երկիր»:

«Ես հիշում եմ, որ մեր քաղաքացի Ա–ի մուտքը արգելափակեցին Ռուսաստան» (Լևոն Բարսեղյան, Ժուռնալիստների ակումբի նախագահ, 1in TV, May 2, 2019):

«Ոստիկանությունը արգելափակել է մարդկանց տեղաշարժը» (հաղորդավար):

Արգելափակել նշանակում է բանտարկել, մեկուսացնել, իսկ բերված օրինակներում խոսքը միայն արգելելու մասին է: Ասել «Մուտքը առանց փողկապի արգելափակված է» կամ «Ծխելը արգելափակված է» նշանակում է վարակված լինել «կրկնաբարդույթի» ախտով: Թողնենք, որ **արգելափակել** բառը ինքնին իմաստով չպատճառաբանված բարդություն է, որովհետև **արգելել** և **փակել** բառերը երկուսն էլ բանտարկել են նշանակում:

Նման – նմանատիպ

Վերահսկիչ պալատի հայտարարություններից մեկում նույնիսկ ասված է՝ «...Նման կամ համանման...», ըստ երևույթին՝ գրողը միայն «նման» բառը բավականաչափ գրագետ չի համարել կամ մտածել է, որ «նման» բառ հայերենում այլևս գոյություն չունի, ուստի անմիջապես շտկել է իր «սայթաքումը»:

Շուտ – շուտափույթ

«Ինչքան շուտափույթ, այնքան լավ»:

«Ինչքան շուտ, այնքան լավ»–ը ասացվածք է՝ քարացած ձև, և ամենևին կարիք չկա այն այսպես «բարեփոխելու»:

Բեռնված – ծանրաբեռնված – գերբեռնված – գերծանրաբեռնված

«Տիգրիս գետում գերծանրաբեռնված նավ է խորտակվել»: Ճիշտ և բավական է **գերբեռնված**–ը:

Բարձր – բարձրակարգ

«...Աչքի է ընկնում իր բարձրակարգ որակով»:

Ինչո՞ւ բարձրակարգ և ոչ բարձր: Չգանձք, **բարձրորակ**-ի փոխարեն էլ ասենք **բարձրակարգորակ**, որն ավելի երկար, ուստի և ավելի «գրագետ» բառ է:

Մոտ – մոտայուտ – մոտակա

Ասվում է՝ **մոտակա** կամ **մոտայուտ** ապագայում կամ անցյալում՝ **մոտ**-ի փոխարեն:

Անջատել – տարանջատել

«Պետք է թացը չորից տարանջատել»:

Անջատել-ն էլ չի խանգարի, բացի այդ՝ «թացը չորից ջոկել»-ը ժողովրդական դարձվածք է և ունի որոշ ոճական արժեք, ուստի դրա գրականացնելը խրախուսելի չէ, հակառակ պարագայում պահանջվում է չափի որոշակի զգացում: Այստեղ տարանջատելը հնչում է ճոռոմ՝ պատկերավոր խոսքը վերածելով անհեթեթության:

Արձանագրել եմ նաև հետևյալ օրինակները (չհասցնելով գրի առնել համապատասխան նախադասությունը), որոնցում պահանջվող բառի փոխարեն օգտագործվել են անհարկի երկարաշունչ բառեր.

Տարբերել – տարբերակել, հետաքրքիր – հետաքրքրաշարժ, զիջում – փոխզիջում, ջերմ – ջերմագին – ջերմագինս, նախանձ – նախանձախնդրություն, ավելորդ – ավելորդաբանություն, զգույշ – զգուշավոր, պատիժ – պատժաչափ, սուտ – ստահող, խաղ – խաղարկում, խաղալ – խաղարկել, փորձել – փորձարկել, պատճառ – սկզբնապատճառ...

Կանխարգելել

Արգելել – կանխել – կանխարգելել

Կա այսպիսի գրույց.

«Բրուտ վարպետը ամեն անգամ իր աշակերտին ջրի ուղարկելիս ապտակում է և զգուշացնում, որ ձանապարհին կուծը չկտորի:

— Հանցանք չգործած երեխային ինչո՞ւ ես ապտակում,— հարցնում է մի անցորդ:

— Կուծը կտորելուց հետո, որ սպանեմ էլ, ինձ համար կուծ չի դառնա,— պատասխանում է վարպետը»:

Թվում է, թե այս գրույցի վարպետի տրամաբանությամբ է հնարավոր հասկանալ **կանխարգելել** բառի իմաստը, բայց արդյոք վարպետը իր ապտակով կանխում, արգելում կամ կանխարգելում է կծի կոտրվելը, իհարկե՝ ոչ, նա տղային ընդամենը զգուշացնում է կծի կոտրվելու հավանականության մասին՝ հուսալով, որ իր ապտակը, լավագույն դեպքում, կարող է մի ինչ-որ չափով նվազեցնել այն:

Կանխել, արգելել և կանխարգելել բայերը համարվում են հոմանիշներ, թեև իմաստային զգալի տարբերությամբ: Իսկ, ըստ էության, հոմանիշ բառերից կազմված բարդ բառը անհեթեթություն է, որովհետև այն ոչինչ չի ավելացնում բաղադրիչների իմաստին և չի դառնում նոր հասկացություն: **Կանխարգելել** բառը կազմված է **կանուխ** և **արգելել** բառերից: **Կանուխ** նշանակում է շուտ, սրանից կազմված բայն է **կանխել**, որը նշանակում է նախքան որևէ բանի պատահելը կամ իրականացումը նրա առաջն առնել, հետևաբար կանխարգելելը կեղծ բարդություն է:

«Պետությունը ինքը պետք է կանխարգելեր...

«...Իրավական մարմինները ունեն ծայրահեղականացումը, բռնությունը կանխարգելելու և նախականխարգելելու գործառույթ» (Ն. Փ., ՀՀ վարչապետ):

«Խիստ անհրաժեշտության կարիք ունենք քաղաքների խցանումների կանախարգելման»:

«Նիկոլ Փաշինյանը կանխարգելել է Սերժ Սարգսյանի հարցազրույցը»:

Սա, իհարկե, տեղեկատվական «սկանդալային» վերնագիր է, իրականում Սերժ Սարգսյանը հայտարարել է, որ իր հրաժարականի տարելիցին հարցազրույց է ունենալու, իսկ վարչապետը կառավարության նիստում սպառնացել է գազի թանկացման հարցում կասկածվող օլիգարխներին, մի խոսքով՝ «Ծիտ, ուտես մախոխ», բայց մեր խոսքը այլ բանի մասին է: Այն, որ **կանխել**-ը ընդամենը պարզ բառ է, և ժամանակակից «գրական-պետական» հայերենում դրա օգտագործումը խստիվ «կանխարգելված» է **կանխարգելել** բարդ բառի կողմից:

«Կանխարգելել» բառը, որն, ըստ երևույթին, անգլերեն prevent բառի թարգմանությունն է, այս օրերին պաշտոնական, թե անպաշտոն խոսքում առատորեն օգտագործվում է իր կանխել և արգելել բաղադրիչների փոխարեն և նույնիսկ հանդես է գալիս որպես հասարակագիտական եզրույթ: Եվ այսպես, մենք ունենք ՁԻԱՀ–ի, խոշտանգումների, բացօթյա ապօրինի առևտրի, բնական աղետների, հանցագործությունների... կանխարգելման մարմիններ, կենտրոններ, խորհուրդներ..., իսկ այսօր էլ ՀՀ նորընտիր խորհրդարանը որոշել է կյանքի կոչել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով»: Հարցը հետևյալն է՝ կոռուպցիայի և մյուս պարագաներում կարելի՞ է օգտագործել **կանխարգելել** բառը:

Բնական աղետներից, հիվանդությունները ներառյալ, կարելի է պաշտպանվել, դրանց հետևանքները վերացնել, բայց արգելել դրանք հնարավոր չէ: Կարկուտը կանխելու համար կան կարկտաբեր ամպերը ցրելու սարքեր, «ՁԻԱՀ–ի կանխարգելման հանրապետական կենտրոն»–ը հավանաբար զբաղվում է արդեն իսկ վարակվածներին որոշ բուժօգնություն ցուցաբերելով կամ վարակից խուսափելու համար մարդկանց որոշ խորհուրդներ տալով: Սրանք ոչ թե երևույթի արգելման, այլ դրա հետևանքներից պաշտպանվելու միջոցներ են:

Հանցանքների դեմ կարելի է պայքարել դաստիարակչական, քարոզչական և պատժական միջոցներով, բայց դրանք արգելելը նույնիսկ ծիծաղելի է: Դժվար է պատկերացնել պետական հիմնարկ, որտեղ ղեկավարի պատկերի կողքին փակցված լինի այսպիսի ծանուցում. «Կաշառքը արգելված է»:

Հանրային վայրերում ծխելը, բացօթյա առևտուրը, խոշտանգումները և այլն կարելի է օրենքով արգելել, իսկ օրենքը խախտողին տուգանել կամ պատժել, բայց այստեղ էլ կանխելը կամ կանխարգելելը բոլորովին իմաստ չունի:

Գուշակել – կանխագուշակել

«...Բայց եթե ազնիվ լինենք, ապա այս դահլիճում նստածների մեծ մասն էլ կարող էր այս նույն չարաշահումների մոտավոր

ոլորտներն ու դրանց մոտավոր չափը կանխագուշակել» (Շ. Ի., ԱԺ պատգամավոր, Ազատություն TV, June 4, 2019):

Նախ՝ **կանխագուշակել** բառը ինքնին սխալ բարդություն է, որովհետև գուշակել կարելի է ապագան հենց կանխավ և ոչ թե անցյալը՝ հետո: Բերված օրինակում խոսքը անցյալի մասին է՝ տարեկան զեկույցի մասին, իսկ անցյալի մասին կարելի է կամ վկայել, կամ ենթադրություն անել, բայց ոչ գուշակություններ անել:

Տարածված են նաև «սկզբից կանխագուշակել» և «սկզբից կանխատեսել» արտահայտությունները, որոնցում նույն տրամաբանական սխալը կրկնվել է, իսկ դա՝ միայն և միայն «կրկնաբարդությի» համաձայնակից անմասն չմնալու սիրույն:

Որոշել – կանխորոշել

«Կանխորոշված էր, որ Հայաստանը պիտի գնա եվրասոցացման ճանապարհով»:

Իսկ ինչո՞վ է խանգարում **որոշված էր** ձևը. չէ՞ որ **որոշել** բայը ինքնին կանխում է իր առարկան, «...որոշել եմ վաղը գնալ», ուրեմն ի՞նչ իմաստային նպաստ է բերում **կանխը**՝ բառը չորստառանոց վանկով ձգելուց բացի:

Պատրաստել – նախապատրաստել

«Այսօր մեր սցենարիստին խնդրեցինք նախապատրաստել հետևյալ թեման»:

Խոսողը **պատրաստել** պարզ բառի փոխարեն օգտագործում է նախապատրաստել բառը, որը թե՛ ավելորդ, և թե՛ տրամաբանորեն սխալ է, որովհետև թեման չի կարելի նախապատրաստել, այն կարելի է մշակել: Նախապատրաստվում կամ նախապատրաստում է ընդհանրապես բանական մարդը:

Առաջ – առաջնահերթ – նախ առաջինը – նախ առաջնահերթ

«Մենք առաջնահերթ այցելեցինք...»:

«...Բայց առաջնահերթ դու պիտի այդ ցանկանաս»:

Երկու դեպքում էլ **առաջնահերթ** ածականը օգտագործվել է նախ կամ սկզբում մակբայների փոխարեն: Պիտի ասել՝ «...Մենք նախ այցելեցինք», «...նախ դու պիտի այդ ցանկանաս»:

«Սկզբնական շրջանում կպատրաստենք երկու ուտեստ»:

Ուտեստի պատրաստումը վերածված է պատմական իրադարձության՝ խոհանոցային կեսժամանոց ծրագիրը բաժանելով շրջանների և ենթաշրջանների: Բավական էր ասել՝ «...նախ կանեմ սկզբում»:

Դիտարկել

Դիտել – նայել – դիտարկել – մշտադիտարկել

Դիտարկել բառը նոր բառ չէ, բայց խիստ մոդայիկ բառերից է և, որպես այդպիսին, դժվարանում է իր որոշակի տեղն ու իմաստը գտնել ժամանակակից հայերենում:

«Ձայնախոսությունը հնչյունը դիտարկում է արտաբերական կողմից» (Հայերենագիտական բառարան, 1978):

Այս օրինակը մենք վերցրել ենք այն հին օրերից, երբ բառերն, ինչպես ամեն ինչ, ինչ–ինչ պատճառներով, ավելի հեշտությամբ էին գտնում իրենց տեղը, կամ նրանց իրենց «տեղը ցույց տվողներ» կային: Այստեղ **դիտարկել** բառը նշանակում է գիտականորեն գննել, քննարկել, ուսումնասիրել, իսկ հաջորդող օրինակները ունեն առավելագույնը 10–15 տարվա անցյալ և ցույց են տալիս, թե ինչպես է բառը ազատ «թևածում» հայ ժամանակակից մտքի անդաստանում.

«...Դիտարկում էինք Լուիզային»:

Ուզում է ասել՝ նայում էինք:

«Բայց այն, ինչ որ ես եմ դիտարկել, դատապարտում եմ»:

Այս նախադասությունը պատկանում է հայտնի «Հարսնաքարի» վկաներից մեկին, որը դիտարկելը օգտագործել է ուղղակի տեսնելու իմաստով.

«Նստել եմ այստեղ և փորձում եմ դիտարկել...»:

Հավանաբար ուզում է ասել՝ նայել, տեսնել:

«...Սահման դիտարկման են այցելել...»:

Պիտի ենթադրել, որ խոսքը ստուգման կամ ստուգատեսի մասին է, և **դիտարկել**–ը օգտագործված է մոնիտորինգի իմաստով:

«Մենք անցկացնում ենք մշտադիտարկում՝ մոնիտորինգ, որպեսզի կարողանանք դիտարկել ձեր հայտադիմումը»:

Այս նախադասությունը պարզում է, որ դիտարկումը մոնիտորինգի հայերենն է, այն պարզում է, որ խոսողի լեզվամտածողության մեջ այդ հայերեն բառը դեռ չունի բավարար վավերականություն, ուստի նա մեքենայորեն բերում է նաև անգլերենը, իսկ նույն նախադասության մեջ երկրորդ անգամ **դիտարկել**-ը օգտագործվում է արդեն բոլորովին այլ իմաստով, բայց թե ի՞նչ իմաստով, այնքան էլ պարզ չէ, որովհետև հայտադիմումը կարելի է քննարկել՝ պարզելու համար՝ համապատասխանում է արված մշտադիտարկումներին, թե՛ ոչ: Եվ ընդհանրապես խոսքի կարճ տիրույթում նույն բառը երկու անգամ օգտագործելը չի խոսում բավարար չափով մշակված լեզվի մասին:

«Եթե դիտարկենք հնարավոր դիսկերը...» (Հակոբ Բաղայան):

Այստեղ դիտարկել-ը, կարծում եմ, պիտի հասկանալ՝ «նկատի առնել», «հաշվի առնել» իմաստով:

«Այդպիսի կտրուկ դիտարկումներ եղել են»:

Դժվար է հասկանալ «կտրուկ դիտարկումներ» բառակապակցության իմաստը: Կոնտեքստից կարելի է ենթադրել՝ այստեղ օգտագործված են կամ ակնարկներ, կամ հարցադրումներ, կամ քննարկումներ իմաստով: Նախադասությունը առնված է Արման Նավասարդյանի հետ հարցազրույցից, երբ նա ակնարկում է, որ Իրանում հետաքրքրված են, թե արդյոք Արցախի համար պատերազմ լինելու է, և հաղորդավարը զարմացած հարցնում է. «Ընդհանրապես, ի՞նչ դիտարկումներ ունեք»:

Այստեղ **դիտարկել** բառը օգտագործված է կարծիքներ, դիտողություններ իմաստով, ինչը շատ հեռու է **մոնիտորինգ** բառից:

«Շնորհակալություն ձեր բերած պարզաբանումների և դիտարկումների համար» (Նվեր Մնացականյան):

Այստեղ **դիտարկել**-ը արտահայտած մտքերը և գաղափարներն է ակնարկում, որին նախորդել է **պարզաբանել** բառը (լուսաբանել, մեկնաբանել), որը կարող է նաև հասկացվել որպես **դիտարկել** բառի հոմանիշ:

«...Գործողությունը որպես ահաբեկչություն է դիտարկվում»:

Դիտարկել բայը հոմանիշն է **քննարկել**, **ուսումնասիրել**, **հետախուզել** բայերի, սակայն այստեղ օգտագործված է ընկալել, համարել, գնահատել կամ մեկնաբանել իմաստով:

«...Եթե (այս անգամ էլ) չընդունեք առաջարկս, ստիպված եմ այն դիտարկել որպես վատություն»:

Այստեղ դիտարկելը հավանաբար փոխարինել է հասկանալ, ընկալել, համարել կամ մեկնաբանել իմաստին:

«Սա քարոզչական քայլ է դիտարկվում»: Նույնը:

«Դիտարկված 121 դպրոցից միայն...»: Խոսքը դպրոցների սանհանգույցների ստուգատեսի մասին է:

«Մշտադիտարկվել են 121 դպրոց և 80 մանկապարտեզ», «...դիտարկված 121 դպրոցից միայն ...»

Նույն տեքստում **դիտարկել** և **մշտադիտարկել** ձևերը օգտագործվել են հետազոտել, հետաքննել, քննարկել, ստուգել իմաստներով: Եթե չեմ սխալվում, սա անգլերեն **monitoring**, ինչպես նաև **observation** բառերի թարգմանությունն է, որ գրասենյակային տերմինաբանությունից ներխուժել է նաև կենցաղ:

«...Թե՛ն, այդուհանդերձ, Ռուսաստանի Դաշնության իշխանությունը պարզապես դեմ չէ, որ Ռոբերտ Քոչարյանը օգտագործի այդ տիրույթը (պետական մեդիան), հնարավոր է, դիտարկելով դա նաև որպես հավելյալ եկամտի աղբյուր»:

Կարծում եմ՝ այստեղ դիտարկելը պիտի հասկանալ **համարել**, **ընդունել** իմաստներով:

«Խոսքը, անշուշտ, ֆիլանտրոպ ներդրողների բանակի մասին չէ, որ այդպիսի ներդրումային բաղադրիչը ընդհանրապես լինում է իր տեսակարար կշռով համեմատաբար քիչ ընդհանուր պատկերում: Շատ կարևոր է, այսպես ասած, առևտրային մարդասիրությունը, երբ բիզնեսը, մի կողմից հետապնդելով առևտրային շահեր, մյուս կողմից այդ շահերի պաշտպանության առանցքային դաշտերից մեկը կդիտարկի քաղաքական արդիական համակարգի՝ հասարակական-քաղաքական հարաբերությունների արդիական համակարգի առկայությունը»:**Կհամարի:**

«Եվ ինչի՞ շուրջ ա դիտարկվում լուծելու հնարավորությունները»:

Խոսողի նպատակը մոտավորապես այն է, թե (ըստ բանակցող կողմերի) որոնք են հարցերը լուծելու հնարավորությունները: Իսկ թե կոնկրետ ինչ իմաստով է օգտագործված **դիտարկել** բայը, դժվարանում եմ ասել. թերևս այն կարելի է փոխարինել **տեսնել** բայով, որի դեպքում «շուրջ»–ի փոխարեն պիտի լինի «մեջ» կապը, իսկ այս դեպքում կունենանք. «Եվ ինչի՞ մեջ են նրանք տեսնում լուծման հնարավորությունները», կամ «Եվ որո՞նք են, ըստ նրանց, լուծման հնարավորությունները»:

«Մինակի խմբի հայտարարությունը ես դիտարկում եմ այս տրամաբանության շրջանակում»:

Դիտարկել–ը այստեղ կարող է նշանակել **հասկանալ, ընկալել** կամ **մեկնաբանել**:

«...Մենք, օրինակ, դիտարկում ենք, արդյոք ԱԱԾ պետի հայտարարությունը (վերաբնակեցման մասին) անվտանգության տեսանկյունից, մենք պետք է նաև էդ գործոնը դիտարկենք» (Հակոբ Բաղայան):

Պետք է հասկանալ **քննարկել, վերլուծել, նկատի առնել, գնահատել...** իմաստներով:

«ԵՀԱԿ առաքելությունը հրադադարի ռեժիմի պլանային դիտարկում է անցկացրել զինուժի շփման գծում»:

Հավանաբար խոսողի նպատակը **ստուգատես**–ն է, բառ, որը կարող է գործածվել **մոնիտորինգ** իմաստով:

«Իհարկե, կադրերն այնպես էին բռնված, որ դժվար էր դիտարկել ռեակցիաները» (Անուշ Սեդրակյան, 1in TV, 10 ապրիլ, 2019, «Առաջին»):

Ակնհայտորեն ուզում է ասել՝ **տեսնել**:

«Փաշինյանը, անդրադառնալով այն դիտարկմանը, թե «Գազպրոմ–Արմինիայում» կրճատումներ են տեղի ունենում ...» (Նվեր Մնացականյան):

Նախադասությունից այնպես է հասկացվում, որ մեկը «դիտարկել է», որ «Գազպրոմ–Արմինիայում» ... Ըստ այդմ՝ խոսքը շրջանառվող լուրի, խոսքի, ասույթի մասին է, բայց այդ դեպքում հնա-

րավոր է **դիտարկում**–ը լուր–ի հոմանիշ համարել, իսկ եթե ոչ, ուրեմն ինչ իմաստ ունի այստեղ **դիտարկել** բառը:

«Հետաքրքիր դիտարկում էր» (Նվեր Մնացականյան):

Հաղորդավարը սրանով գնահատում է իր խոսակցի արտահայտած միտքը, գաղափարը կամ մատնանշումը:

«Ձեր դիտարկմամբ ինչ բարդության գործ է սա» (Նվեր Մնացականյան, 1in TV, 7 May, 2019):

«...Բայց, ի վերջո, ինչքան էլ չճանաչված՝ Արցախը առանձին պետություն է դիտարկվում, սուբյեկտ...» (Մհեր Ղալիշյան, 1in TV, May 7, 2019):

Համարվում, ընկալվում

«Սա շատ կարևոր է, որպեսզի չդիտարկվի Արցախի քաղաքական համայնքը մեկուսացված» (Արթուր Սաքունց):

Համարվել, դիտվել, ընկալվել

«Պր. Բալասանյանը իրեն դիտարկում է որպես Արցախի նախագահ»:

Համարել, պատկերացնել, դիտել

«...Բայց, այնուամենայնիվ, պետք է հասկանալ, որ Արցախի սուբյեկտայնությունը չի կարող դիտարկվել որևէ մեկի մտքում կամ որևէ մեկի պլաններում որպես հակադրման գործիք Հայաստանի իշխանություններին» (Արթուր Սաքունց):

Համարվել, ընկալվել, դիտվել

«...Իսկ այն դիտարկմանը, որ ԲՀ կուսակցությունը նախկինում կապում էին ՌԲ–ի անվան հետ ԳԾ–ն պատասխանել է»:

Մատնանշում, միտք, հարց

Հարց. «...Ո՞ր մտքերի հետ եք համաձայն, և որոնք գտնում եք, որ չեն համապատասխանում իրականությանը. ձեր դիտարկումները» (Հրայր Թամրազյան, Ազատություն TV, 12 May, 2019):

Դիտարկում բառի իմաստը կարելի է կռահել միայն նախադասությունից:

Կարծիք, գնահատական, մեկնաբանություն

Պատասխան. «Ես կարծում եմ, որ փաստերը պիտի ներկայացվեին համակարգված, ...որպեսզի մենք համակարգված դիտար-

կեհնք այդ փաստերը» (Անի Սամսոնյան, Ազատություն TV, 12 May, 2019):

Այս պատասխանի մեջ **դիտարկել** բառը նույնպես կարելի է հասկանալ **գնահատել**, **մեկնաբանել** իմաստներով:

«Որպես Երևանի ավագանու նախկին անդամ՝ սենց մի դիտարկում...» (Արայիկ Հարությունյան, ԿԳՄՍ նախարար):

Հավանաբար հնարավոր է **դիտարկում**-ը փոխարինել **մատնանշել**, **ասել**, **հիշեցնել** բառերով:

«Ե՛րբ ենք դիտարկում նոր մրցություն անցկացնելու հնարավորությունը» (Արայիկ Հարությունյան, ԿԳՄՍ նախարար)

Ինձ համար բոլորովին խորթ է այս լեզվամտածողությունը, և չեմ կասկածում, որ նախադասությունն ամբողջությամբ թարգմանություն է, որն ուզում է ասել. «Ե՛րբ է հնարավոր կամ նպատակահարմար նոր մրցություն անցկացնել» կամ «Ե՛րբ ենք մտածում կամ ուզում»:

«... Եվ նաև շուկայի դիտարկումներում Երևանից դուրս ամենամեծ աճը, որ մենք ունենք, նախորդ ամսվա դեպքում, 2 %-ի մասին ա խոսքը գնում» (կառավարության նիստ):

Գուցե տվյալներո՞վ, ցուցանիշներո՞վ:

«Անկասկած է, որ խոսքը լիարժեք հղկված և մանրամասն դիտարկված մեխանիզմի ներդրման մասին է» (Լրագիր am, մեջբերում Ն. Փ-ից):

Այստեղ **դիտարկված**-ի փոխարեն կարելի է ասել **ուսումնասիրված**:

«Դեսպանը կիսում է այն կարծիքը, որ որոշ ամերիկյան քաղաքական գործիչներ դիտարկում են հայոց ցեղասպանության զոհերին նվիրված միջոցառումները որպես միջոցների հավաքագրման ձև»:

Կարծում եմ՝ ուզում է ասել. «...միջոցառումներին նայում են» կամ «...միջոցառումները օգտագործում են»:

«...Նկատի առնելով շուկայի պահանջարկը, հավանական է, որ ապագայում դիտարկենք նաև այդ տարրերակը»:

Նկատի առնենք, փորձենք, քննարկենք:

«...Զեկույցում դիտարկվել են օղի աղտոտման երկու գործոն՝ ծուխը և մուրը...»:

Դիտարկվել–ը հավանաբար պիտի հասկանալ **քննվել** իմաստով:

«...Հանրային դիտարկության մեջ ...».

Քննարկում, կարծիք

«(2024, որից հետո Պուտինը կամ պիտի հեռանա, կամ մինչ այդ գտնի որևէ ձև: Ըստ այդմ՝ համարվում է, որ Պուտինը այդ ձևերից մեկի տարբերակ դիտարկում է Բելառուսի հետ միութենական մի որևէ ձևաչափ, որը նրան թույլ կտա իշխանությունը պահել այդ կարգավիճակում» (Iragir.am, May 5, 2019):

Համարում է:

«Նորանշանակ դեսպանի ելույթը, անշուշտ, ուշագրավ է, մանավանդ երբ այն դիտարկում ենք Հայաստանում տեղի ունեցող զարգացումների համատեքստում»:

Քննարկել, մեկնաբանել:

«Լուսավոր Հայաստանը հղեց իր հարցերը, իսկ Բարգավաճ Հայաստանը սահմանափակվեց դիտարկումներով»:

Նկատողություն, մատնանշում:

«Ես երկու դիտարկում եմ ուզում ձեզ ներկայացնել»:

Նկատառում:

«Մենք Փարաջանովի ֆիլմերը դիտարկում էինք հեռվից»:

Նայում, տեսնում:

«...Էդ կանոնակարգված բռնությունը եթե ի վիճակի չէ պետությունը իրագործել, այսինքն՝ այն չի դիտարկվում որպես գերակշռող ուժային կենտրոն...»:

Ընկալվում, համարվում:

«Մի քանի դիտարկում...», «...հետաքրքիր դիտարկում էր...»:

«Ռուսաստանի դեսպանի դիտարկմամբ՝ երկկողմ հարաբերություններում պահպանվել է նույն դինամիկան»:

Կարծիքով, ասածով, խոսքով, բնութագրմամբ, գնահատմամբ, ըստ ՌԴ դեսպանի:

«Ես կուզեի հարցին իրավական տեսանկյունից դիտարկել»:

Նախ՝ **դիտարկել**–ը ներգործական բայ է և պահանջում է հայցական հոլովով խնդիր, այսինքն՝ պետք է ասել՝ «...հարցը դիտարկել...»: Իսկ «հարցին» տրական խնդիրով մենք ունենք. «հարցին նայել» կամ «հարցին մոտենալ» ձևերը:

Մոտենալ, նայել:

Այսպիսով՝ վիճակագրությունը. նայել՝ 4, տեսնել՝ 4, գննել՝ 1, ստուգում, ստուգատես, մոնիտորինգ՝ 5, հետախուզել՝ 1, նկատի առնել, հաշվի առնել՝ 2 դիտել՝ 3, ակնարկել, հարցադրում՝ 2, կարծիք՝ 5, դիտողություն՝ 1, հասկանալ, ընկալել՝ 6, համարել՝ 9, գնահատել՝ 3, միտք՝ 2, գաղափար, մատնանշում՝ 6, պատկերացնել՝ 1, հիշեցնել՝ 2, քննարկել՝ 12, մեկնաբանել՝ 7, ուսումնասիրել՝ 3, պարզաբանել, լուսաբանել՝ 6:

2.3. ակ, ունակ, ակի, իկ ...

Կրկնաբարդույթի տարածված տեսակներից մեկն էլ պարզ և ածանցավոր բառերը ակ, ակի, ին, ունակ ևն մասնիկներով զարդարելն է:

Զգայուն – զգայունակ

«Երեխաները զգայունակ են...»:

Բայց չէ՞ որ **զգայուն**–ը արդեն իսկ ածանցված է **ուն** ածանցով, ինչպես՝ **ձկուն, բեկուն, գիտուն...** Մենք ունենք նաև «ունակ» բառը, որից էլ՝ **ընդունակ, մարտունակ, աշխատունակ** ևն, և հավանաբար սխալի պատճառը **ուն** մասնիկի և **ունակ** բառի միակցումն է, որը ոչ մի իմաստայի և քերականական արդարացում չունի:

Կարող – կարողունակ – անկարող – անկարողունակ

Կարող–ը արդեն իսկ նշանակում է ունակ, հետևաբար **կարողունակ** բառը, լինելով համանիշ ածանցների միակցում, կեղծ բարդություն է: Սխալը սխալի վրա է բարդվում **ան** ժխտականի հավելումով, որովհետև բացասական ածանցին գումարելով **ունակ = կարող** դրական ածանցը՝ ստացվում է հակիմաստություն (պարադոքս):

Շարժուն – շարժունակ – անշարժունակ

«...Քաղաքական տեսակետից անշարժունակ վիճակում էր հայտնվել» (Ար. Միք.):

Ուզում է ասել՝ անշարժության էր մատնվել:

Պարզ – պարզունակ

«...Այդ խնդիրը էնքան պարզունակ է... հիմա այնքան ենք բարդացրել...» (Արամ Մանուկյան, 1in TV):

Պարզից էլ պարզ չէ՞, որ խոսողը, վարակված լինելով «կրկնաբարդույթի» վիրուսով, **պարզ**–ի փոխարեն ասել է **պարզունակ**, որը ունի **միամիտ, մակերեսային** իմաստը և ոճական առումով հակադրվում է տվյալ խոսքային միջավայրին:

Առաջին – առաջնային

«Գլխավոր և առաջնային հարցը այն է, որ...»:

«...Փորձում է անել ամեն ինչ, որպեսզի... ինքը՝ անձամբ, որպես ռեյտինգային թեկնածու, լինի առաջնայինը»:

Հեղեղ – հեղեղում

«...Աննախաղեպ հեղեղումը աղետալի վիճակ է ստեղծել»:

«Ենթադրվում է, որ այսօր նորից կլինի հեղեղում» (Ազատություն, հաղորդավար):

Երկու դեպքում էլ **ում** մասնիկը ավելորդ զարդարանք է, ավելացնենք նաև, որ երկրորդ նախադասության մեջ **ենթադրել** բայը օգտագործված է նախատեսել իմաստով, ինչը ճիշտ չէ:

Որոշ – որոշակի – որոշակիորեն

«ՀՀ-ի համար հասկանալի չեն, ընկալելի չեն, որոշակի չեն այդ վերահսկողության մեխանիզմները»:

Որոշակի բառը օգտագործվել է հասկանալի, ընկալելի, պարզ, հստակ, որոշ իմաստով, ինչը արդարացված չէ:

«Լրատվամիջոցները պատկանում են իրենց *որոշակիորեն*^{օօ} և մեծ շրջապատին»:

«Սա ակնհայտորեն Ռուսաստանին տրվող մեսիջ է, որոշակիորեն նպատակներ ունեցող» (Գայանե Աբրահամյան):

«Ես գտնում եմ, որ այդ և այլ հարցերին հնարավոր կլինի անդրադառնալ որոշակի կարճ ժամանակահատված անց» (փաստաբան):

Բավական էր ասել՝ «որոշ ժամանակ անց» կամ «կարճ ժամանակ անց» և ազատվել 14 տառի և 6–7 վանկի բեռից, որոնք պարզապես նշանակում են «շուտով»:

*Որոշ-ը երկխմաստ բառ է, այն թե՛ որոշ, պարզ հստակ է նշանակում և թե՛ անորոշ, անհայտ, ինչ-որ, իսկ **ակի** վերջածանցը ոչինչ չասող պաճուճանք է:*

Հաճախ – հաճախակի

Նրանք հաճախակի են հանդիպում...

Դժվար – դժվարին

Ինչ դժվարին հարց ես տալիս:

Անհնար – անհնարին

Դա անհնարին է:

2.4. Կեղծ բարդումներ

Կեղծ պիտի համարել բոլոր այն բարդումները, որոնք բովանդակային առումով նոր բառեր չեն ստեղծում, և դրանց բաղադրումը ունի միայն ձևական բնույթ: Եվ պատահական չէ, որ նման բառերը մեծ մասամբ կազմված են լինում հոմանիշ բառերից:

Ինչ իմաստ ունի աղի վրա աղ ավելացնելը, արդյո՞ք այն ավելի կաղիանա կամ դուրսն է՝ հինչ կփոխի իր քիմիական հատկությունները:

Բռնություն + ճնշում = բռնաճնշում

Դրոշմ + կնիք = դրոշմակնիք

«...Անձնագրերը ստուգող և դրոշմակնիքը դնող պաշտոնյաները եղել են, ասենք թե, Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ»:

Բավական էր ասել «...ստուգող և կնքող...»:

Շրջան + փուլ = Շրջափուլ

«...Հեղափոխությունը թևակոխում է նոր շրջափուլ» (Նիկոլ Փաշինյան): Բարդություն, որի յուրաքանչյուր բաղադրիչը կարող է լիարժեք կատարել բաղադրյալի դերը:

Մաս + բաժին = մասնաբաժին

«Ստացիր քո մասնաբաժինը»:

Պետք է ասել **մասը** կամ **բաժինը**, իսկ եթե խոսողը անդարձորեն վարակված է «կրկնաբարդույթով», ապա խորհուրդ կտայինք օգտագործել բաժնեմաս ձևը:

Բաժին – չափաբաժին

«Նրանցից յուրաքանչյուրն ստացավ իր չափաբաժինը»:

«Վեց ամիսը մաքսիմալ մեր ժամանակահատվածի չափաբաժինն էր» (1, Անդրանիկ Քոչարյան):

«Տուրիստներին պետք է ադապտացված չափաբաժնով մատուցել ուտելիքը»:

Եթե բավարար չափով էլ մատուցեք, չեմ կարծում, որ դժգոհ մնան, իսկ եթե ուզում եք, որ նրանք կրկին այցելեն ձեզ, դրան գումարեք պատշաճ մակարդակը, բայց արդարացված չափաբաժնով հաստատ հեռուն չեք գնա»:

Թիվ – թվակազմ

«...Վերջերս շրջանում (դեպ ԱՄՆ գաղթողների) կարավանի թվակազմը նվազել է, սակայն այն, միևնույն է, մոտենում է Ամերիկայի տարածքին» (AMGA News, 04.26.2019, հաղորդավար):

Նախ ամբողջ նախադասությունը ողբալի է, բայց մենք պարտավոր ենք հասկանալ, որ վերջերս ԱՄՆ գաղթողների թիվը պակասել է, այդուհանդերձ կարավանը մոտենում է Ամերիկայի սահմանին:

Անդրադառնալով **թվակազմ** բառին՝ ասենք, որ այն հայերենի բառակազմական և ոչ մի սկզբունքով չի արդարացվում: Այն հավանաբար կարելի է օգտագործել կազմակերպչական խումբ կազմող անդամների թվի իմաստով, մինչդեռ այստեղ խոսքը անկազմակերպ, անորոշ թվով բազմության մասին է:

Թիվ + քանակ = թվաքանակ

Չափ + քանակ = չափաքանակ

«Միլիոնների չափաքանակով դեղամիջոց են փոխանցել...»:

ա. **Չափ** և **քանակ** բառերը հոմանիշներ են, և դրանցով կազմված բարդությունը չի դառնում նոր հասկացություն, ինչը բառաբարդման հիմնական պահանջն է:

բ. Պարզ չէ, թե արդյոք խոսքը դրամական արժողության մասին է (միլիոնների), թե քաշի ու թվի, հավանաբար ուզում է ասել՝ **միլիոնների արժողությամբ...**

գ. Այս նախադասության մեջ և ընդհանրապես **դեղամիջոց** բաղադրյալ բառն էլ անհաջող է, քանի որ ոչինչ չի ավելացնում **դեղ** բառի իմաստի վրա, դրա փոխարեն ավելի լավ է **դեղորայք** բառը: Առաջարկում եմ, «Միլիոնավոր դոլարների դեղորայք են փոխանցել»:

Խումբ + քանակ = խմբաքանակ

«Մեզնից հիմա եկան առաջին խմբաքանակը վերցրին: Մենք դեռ չէինք սկսել ակցիան, մենք դեռ 9 թույն ունեինք»: Խոսողը ուզում է ասել՝ մեզանից առաջին խմբին արդեն ձերբակալեցին (բերման ենթարկեցին): Խմբաքանակ բառը ընդհանրապես անհեթեթություն է, որովհետև խումբ կարող են կազմել միայն մարդիկ, իսկ քանակ՝ միայն անշունչ առարկաները:

Սահման + քանակ = սահմանաքանակ

Սա արդեն «կրկնաբարդույթ» վարակի վերջն է:

3.«Կրկնաբարդույթի» տրամաբանական ավերը

«Կրկնաբարդույթը», լինելով ախտավոր երևույթ, չէր կարող իր հոռի հետևանքները չունենալ լեզվի այլ մակարդակներում. գնանք դրանց հետքերով:

3.1. Հարադրական բարդումներ

Խորհուրդ – խորհուրդ տալ – խորհրդատվություն – խորհրդատվություն տալ

«Խորհրդատվություն տվեցիր կառավարությանը, կառավարությունը տարավ դրեց դարակում, ու վերջ» (Անահիտ Բախշյան):

Դե, իհարկե, մի՞թե կարելի է նորին մեծություն կառավարությանը ընդամենը մի չնչին երկվանկանոց խորհուրդ տալ, երբ հայոց լեզվի հարուստ բառազանձում ունենք 7 վանկանոց փառաշուք **խորհրդատվություն–ը**:

Բայց պարզվում է, որ ո՛չ միայն կառավարության նկատմամբ է նման հանդգնությունն աներևակայելի, այլև անչափահասների.

«Անչափահասներին պետք է այդ մասին որոշակի խորհրդատվություններ տալ»:

Եվ թող ոչ ոք իրեն թույլ չտա, ներեցե՛ք, թույլտվություն չտա բավարարվել ընդամենը որոշ «խորհուրդներ տալ»–ով, այն էլ եզակի. ամբողջ 6 վանկ՝ 9 տառի տարբերություն կա մեջտեղը, պարզապես ամոթ է, զավառամտություն է: Հիմա տեսնենք, թե ինչպես է հարկավոր զարգացնել և նոր բարձունքների առաջնորդել հայոց ոսկեդենիկը:

Ուրեմն, ունենք **խորհուրդ տալ** մաշված, խունացած բայը, որի բաղադրիչները միացնելով՝ ստացել ենք **խորհրդատվություն**

ածանցավոր գոյականը: Բայց անհրաժեշտ է առաջ անցնել և ոչ թե դոփել տեղում, իսկ դրա համար բավական է առնենք այս ածանցավոր գոյականը և կրկին կողքին դնելով **տալ** բայր՝ ստեղծենք **խորհրդատվություն տալ** նոր հարադրական բայը:

Սխեմա.

խորհուրդ տալ + ություն > խորհրդատվություն + տալ > խորհրդատվություն տալ:

Իսկ թե ինչ իմաստային տարբերություն կա **խորհուրդ տալու** և **խորհրդատվություն տալու** միջև, ամենևին կարևոր չէ, կարևորն այն է, որ երկրորդը նախորդին գերազանցում է 4 վանկով: Եվ այսպես շարունակվում է հայոց լեզվի անկասելի «զարգացումը» նոր գլոբալ մարտահրավերներին ընդառաջ:

Տեղեկություն – տեղեկացնել – տեղեկություն տալ – տեղեկատվություն – տեղեկատվություն տալ:

«Ուղիղ եթերով ուզում եմ ձեզ մի քանի տեղեկատվություն տալ» (Ն. Փ., վարչապետ):

«Բի.Բի.Սի–ի տված տեղեկատվության արձագանքի հետ կապված...»:

Այս օրինակներում ակնհայտ է թարգմանության բացասական երեսը, երբ լեզուն ինչ–որ բան շահելու փոխարեն կորցնում է: Անգլերեն **inform** բայը հավասար է հայերեն **տեղեկացնել, տեղեկություն տալ** բային, իսկ **information** անունը հայերենում թարգմանվում է թե՛ **տեղեկություն**, և թե՛ **տեղեկատվություն** բառերով, որոնք հայերենում մեր լեզվում բոլորովին տարբեր իմաստ ունեն. առաջինը առարկայի անուն է, երկրորդը՝ դրա հետ կապված գործողության անուն: Ստացվում է, որ մեր երեք բառը թողած՝ փորձում ենք տեղավորվել անգլերենի երկու բառի մեջ:

Նույն իմաստով

«Իրենք հավելյալ տեղեկատվության են տիրապետում»:

«...Ինչի մասին էլ մենք այնքան շատ տեղեկատվություն չունենք...»

«...Գտնել ճշգրիտ տեղեկատվություն»:

«Իմ տեղեկատվությամբ այդ հանդիպումը եղել է բավականին կառուցողական, շահավետ»:

Բոլոր այս օրինակներում **տեղեկություն** բառը իսպառ դուրս է եկել շարքից՝ իր տեղը զիջելով **տեղեկատվություն**-ին, որը իրականում օտար **ինֆորմացիա** բառի հայերենացումն է՝ ի հեճուկս հայոց լեզվի տրամաբանության:

Թույլ տալ – Թույլատրել – Թույլտվություն տալ

«Եթե հուշարձան է, մենք պարտավոր ենք թույլտվություն տալ» (մշակույթի նախարար, Good Day Armenia, May 30, 2019):

Նկատի առնելով, որ խոսողը նախարար է, և խոսքը որոշ հուշարձանների նորոգմանն է վերաբերում, կարելի է ենթադրել, որ **թույլտվություն** ասելով նա հասկանում է այդպես կոչվող հրամանագիրը և ոչ թե թույլ տալու արարքը, այլապես հենց այդպես էլ պետք է ասել՝ թույլ տալ:

Նույնպես ասվում է.

Թույլտվություն տալ

Ունենք **թող տալ, թողնել**, նաև **արտոնել, արտոնություն տալ, արտոնագիր** բառերը, որոնք լիովին կարող են երաշխավորել խոսքի պաշտոնականությունը:

Նվիրատվություն տալ

Ունենք **նվիրել, նվեր տալ, նվիրաբերել, պարգևել, պարգևատրել** ևն:

Հաշիվ – հաշիվ տալ – հաշվետվություն տալ

«Նա պետք է հաշվետվություն տա» (Ազատ Արշակյան):

Պետք է ասել **հաշիվ տալ**, ինչը այստեղ ավելի է հարմարում խոսքի պաթետիկ, հռետորական ոճին, իսկ պաշտոնականություն ապահովելու համար կարելի է ասել. «Հաշվետվություն ներկայացնել»:

Շեշտ – շեշտել, շեշտադրել – շեշտ դնել, շեշտադրություն, շեշտադրություն դնել

«Վարչապետը հատուկ շեշտադրություն դրեց...»: Պիտի լինի՝ **շեշտեց**:

«Դու նայում ես, թե ինչի վրա է դրվում շեշտադրությունը» (Անուշ Սեդրակյան, հարցազրույց, 1in, 10 ապրիլ, 2019): Պետք է ասել **շեշտը**:

Հանցանք – հանցանք գործել – հանցագործություն – հանցագործություն գործել

«Եթե իրենք հանցագործություն չեն գործում...» (Զարեհ Սինալյան): Պետք է ասել՝ **հանցանք չեն գործում**:

«Խոսքը 16–18–ին գործած հանցագործության մասին է» (Նվեր Մնացականյան):

«ՌԲ–ն պնդում է, որ որևէ հանցագործություն չի գործել» (Ազատություն TV հաղորդավար):

«Մենք հանցագործություն ենք գործում» (Կարեն Վարդանյան, ԱՏՁՄ գործադիր տնօրեն):

«Մարդկության դեմ գործած հանցագործություն»:

Հարց – հարց դնել – հարցադրում – հարցադրումներ դնել – հարցադրում բարձրացնել

«Այդ հարցադրման մասին մենք կխոսենք հետո»:

Սա էլ խորհրդարանական բառապաշար է հիշեցնում, այլապես պիտի ասել՝ **այդ հարցի մասին...**

«... Մենք հարցադրում էինք ներկայացրել, որ ներկայացնենք այն տեսլականը, ըստ որի՝ պիտի լինեն (կառավարության) այդ կառուցվածքային փոփոխությունները» (Անի Սամսոնյան, պատգամավոր, Ազատություն TV, 12 May, 2019):

Բայց գուցե իսկապես պատգամավորը կարող է միայն հարցադրում դնել, բայց ո՛չ երբեք հարց դնել կամ հարց բարձրացնել: Թողնենք, որ նախադասությունը ամբողջությամբ լեզվական աղետի սարսուղազդու ախտանիշ է:

Նույն դասի մարդիկ են նաև հետևյալ խոսողները:

«Դրվում են բազմաթիվ հարցադրումներ»: Պիտի լինի **հարցեր:**

«Այն տրամաբանական հարցադրումն է առաջ գալիս...»: Պիտի լինի **հարցը:**

«Հայաստանի բարձրացրած հարցադրումները...»: Պիտի լինի **հարցերը:**

«... իսկ դրանից դուրս նախագահ Սարգսյանը առանձնացնում է այն հարցադրումները, որ դրվեցին «Մտքերի գազաթնաժողովի» անցկացման հենց առաջին օրը...» (թղթակից, «Հորիզոն», 10.6.2019): Պիտի լինի՝ այն հարցերը, որ դրվեցին:

Եզրակացնել – եզրահանգման հանգել

«Կարո՞ղ է նման եզրահանգման հանգել դատավորը» (Գագիկ Ջահանգիրյան, «Ազատություն» TV, 21 June, 2019):

Մենք ունենք **եզրակացնել, եզրակացության հանգել, եզրակացության հասնել, եզրակացություն կատարել, եզրակացության գալ, եզրահանգման գալ, եզրահանգում կատարել...** բայց ահռելի չափերի է հասնում ընդհանրացած սխալի զորությունը:

Բերված օրինակները հիմնականում ներկայացնում են գրական լեզվի վարչարարական–գրասենյակային տարբերակը, և նշված լեզվական խեղումները բնորոշ են այդ տարբերակին:

3.2. Բարդ բառով և դրա բաղադրիչներից մեկով կազմվող բառակապակցություններ

Պատվովս երդվում եմ, որ սրանք ինձանից չեմ և չէի կարող հորինել:

Գործ – գործընթաց

«...Գործընթացը այժմ **ընթացքի մեջ է**» (Մարինա Օհանջանյան, ՀՔԱ խոսնակ):

«Որովհետև ձեր մեկնաբանությունները Հայաստանի քաղաքական դաշտում **ընթացող գործընթացների վերաբերյալ շատ հետաքրքիր են**» (Նոյան Տապան, հաղորդավար):

«... այս մեկ տարվա **ընթացքում ընթացող գործընթացների արդյունքում** ինձ մոտ ձևավորվել է համոզմունք, որ...» (Խոսարով Հարությունյան):

«Սա շատ կարևոր հայտարարություն և շատ լուրջ հիմք աստեղծում գործընթացի առաջընթացի համար» (Նիկոլ Փաշինյան):

«Եկեղեցին **տոնախմբում է Սբ. Սարգիս գորավարի տոնը**»:

Արդյոք կարելի է **տոնախմբել** բառը բաժանել **տոն** և **խմբել** մասերի: Եթե այո, ուրեմն ինչո՞ւ չասել «եկեղեցին խմբում է Սբ. Սարգիս տոնը», բայց դա ճիշտ չի լինի, որովհետև **տոնախմբել** նշանակում է խմբովին նշել որևէ տոն, որտեղ ենթական հավաքականությունն է, իսկ ստորոգյալը՝ **տոնել**-ը, **նշել**-ը կամ **կատարել**-ը: Հետևաբար՝ պիտի հրաժարվել **տոնախմբել** կասկածելի բարդումից և ասել՝ Եկեղեցին **տոնում է, կատարում է կամ նշում է** Սբ. Սարգիս գորավարի տոնը:

«**Նստացույցի են նստել...**»:

Իսկ ի՞նչ անեին, կանգնեին:

«Քաղաքը բավականին մաքուր և բարետես **տեսք** ունի» (Դավիթ Ալավերդյան):

Բավական է ասել՝ բարետես է:

«Գները հարաճուն **աճում են**»:

Իսկ ինչո՞ւ չասել՝ սղաճի հարաճուն աճը ձեպընթաց բարգավաճում է:

«**Հնարավորինս նվազեցված է ալերգիաների հնարավորությունը**»:

Հնարավոր–ի կրկնությունից հնարավորինս խուսափելու համար **հնարավորինս–ի փոխարեն հնարավոր է ասել՝ մեծ չափով, մեծապես, բավականին, նկատելիորեն, բավարար չափով**: Իսկ մեր համեստ կարծիքով՝ հնարավորինս նվազեցված են ալերգիաները և ո՛չ թե սրանց հնարավորությունները:

«Նշված **դեպքերից մեկի առկայության դեպքում...**»:
Կարծում եմ՝ ուզում է ասել՝ նշված դեպքերում:

«Նա պիտի պատժվի **արարքների** համար, որ **արել է**»:
Իսկ այս աստղը պիտի պատժվի իր ասածների համար, որ ասել է:

«Հսկայածավալ գործունեություն **ծավալեց...**»:

«**Հիմնարար հիմքեր** չկան...»:

«**Հիմնվելով միջազգային հիմունքների հիման վրա**»:

«Մեղադրական դատավճիռը **հիմնված է եղել միայն ոստիկանների վկայության հիման վրա**»:

«Ավելի հաստատ **հիմքերի** վրա **կհիմնվի**»:

«Պատճառն այն է, որ Ադրբեյջան կոչվող երկիրը **հիմքից հիմնվել է ստի և գողության հիման վրա**»:

«**Հիմնավորեց բոլոր իրավական հիմքերը**» (Շավարշ Քոչարյան, Հ1):

«Նրա ցուցմունքների վրա **հիմնվելը հիմնավոր չէ**» (Հմայակ Հովհաննիսյան):

«...Հույս եմ հայտնում^{օօօօ}, որ իրավական փաստերի և **հիմնավորումների հիման վրա են ներգրավվում^{օօօօ}** քննության վրա» (Լիլիթ Մակունց, Ազատություն, 22 հոկտ., 2019):

Հիմքերը ինքնին հիմնավոր են և կրկին հիմնավորելու կարիք չունեն:

«Քիվեստյան համաձայնագիրը խնդրահարույց շատ խնդիրներ է պարունակում»:

«Կյանքի որակը պայմանավորող պայմաններն են տարբեր»:
Բավական էր ասել. «Կյանքի պայմաններն են տարբեր»:

«**Պայմանավորված է եղանակային անբարենպաստ պայմաններով**»:

Պայման արմատի չարչրկումից խուսափելու համար գուցե ասեինք. «Պայմանավորված է անբարենպաստ եղանակով» կամ՝ «Հետևանք է եղանակային անբարենպաստ պայմանների»:

«Ճանապարհային բարենպաստ պայմանները նպաստեցին...»
(«Երկիր», լուրեր):

Կրկնությունից խուսափելու համար առաջարկվում են.

«Ճանապարհային բարենպաստ պայմանները օգնեցին»,

«Ճանապարհների բարեկարգ վիճակը նպաստեց»,

«Բարեկարգ ճանապարհները նպաստեցին»:

«Համատեղ ջանքերի **արդյունավետությունը** կլինի շատ ավելի **արդյունավետ**»: («Շանթ», Արտյոմ Երկանյան):

«**Տեղ, որտեղ** կարելի է գծություններ իրականացնել»:

Պիտի ասել՝ տեղ, որում...: Իսկ ինչ վերաբերում է **իրականացնել** բային, ապա այն վերջնականապես զբաղեցրել է **անել** կամ

կատարել բայերի տեղը, ինչը հաճախ զավեշտի է վերածում խոսքը, ինչպես վերի օրինակում:

«Պատվավոր պատվանդան ...»

Իսկ անպատիվ պատվանդան լինում է, չէ՞ որ **պատվանդան** բառի մեջ արդեն իսկ առկա է **պատիվ** արմատը:

«Մի բան, որի առկայությունը **կա** մեր հասարակության մեջ»:

Պիտի ասել մի բան, որը առկա է... կամ՝ մի բան, որը կա...

Ներս – ներխուժել

Հակառակը երևի կլինի դուրս ներխուժել կամ դուրս դրսխուժել:

«Միջոցառումների միջոցով»

«...համանման միջոցառումների միջոցով Երևանը պիտի կարողանա ինքն իր համար հստակեցնել...» (8rd am):

«ՀՀԴ–ն կարող է ցանկացած արտահայտչամիջոցի միջոցով իր քաղաքական գոծունեությունը ծավալել» (Ալեն Սիմոնյան):

«Դեղամիջոցների միջոցով»

«Տեղեկատվական միջոցների միջոցով»

Գուցե ասեինք՝ **միջոցառումներով, տեղեկատվության միջոցով** կամ **տեղեկատվությամբ**:

«Եկեք, հատուկ ծափողջույններով **ողջունենք...**»

Ի հարկե, ամոթ է ասել ծափահարությամբ կամ ծափերով, առավել ևս, որ խոսքը «հատուկ» և ոչ թե հասարակ ծափողջույների մասին է: Տեսնես դր հանձարեղ գլուխն է **ծափ** և **ողջույն** անշուք բառերից կերտել այս փառաշուք **ծափողջույն** բառը: Չէ, «կրկնաբարդոյթի» վարակը «հրաշքներ» է գործում:

«Մենք մեր **ձայնը** բարձրաձայնել գիտենք» (Արամ Սարգսյան):

«...էս տեքստերը եթե հետահայաց հայացքով դիտենք...» (24 հաղորդավար):

«Այս մեքենայի վրա շատ մեծ ներդրումներ պիտի դրվի»:

«Եթե ԱՎ-ն իրոք փորձել է իրականացնել պետական հեղաշրջման փորձ...» (Արտակ Գալստյան, 8 rd news, 24 սեպ., 2019):

«Արգելադրումներ դնել» (Միքայել Մելքումյան):

«Անվտանգության վտանգ ստեղծել»:

Բառի կրկնության այլ պարագաներ

«...Սնահավատ ավանդություններին չեն հավատում»:

Այս այլանդակությունը ընդամենը փորձում է ասել՝ սնահավատ չեն, բայց անձամբ մարսած չլինելով սնահավատ բառի իմաստը՝ անհրաժեշտություն է զգում նախ հենց իր, ապա նաև լսողի համար վերլուծել այն. **սնահավատ** նշանակում է **սին** բաների չհավատացող:

«Նրա **անհրաժեշտությունը** շատ **անհրաժեշտ է**»:

Ծանոթ և բարդ ախտանիշ է.

1. Խոսողը այլակերպում է. «Նրա **ներկայությունը անհրաժեշտ է**» իր լսած կիսամարս ֆրագր:

2. Տառապելով «կրկնաբարդոյթով» և չբավարարվելով անհրաժեշտ բառով՝ օգտագործում է նաև դրա կրկնաձանցված ձևը:

«Թող քոչարյանականները հույս չունենան, որ կարող են սադրիչ գործողություններ իրականացնել և չստանալ համապատասխան պատասխան» (perfect TV):

Կարելի է՝ «Թող քոչարյանականները հույս չունենան, որ կարող են սադրել և չստանալ արժանի պատասխան»:

«...Իր կյանքի **տարեգրության** լավագույն **տարիները...**»:

Տարեգրությունը պատմագրական ժանր է, դեպքերի ժամանակագրական գրառում և այստեղ կոպիտ ավելադրություն է, խոսքը մարդու կյանքի տարիների մասին է և ոչ թե ինչ–որ գրքի: Իսկ ամենավատը **տարեգրության տարիներ** բառակապակցությունն է:

«...Սեփական **բարեկեցությունը բարելավելու** համար»:

«...Արտաքին քաղաքականության **արդյունավետության արդյունքն է**»:

«...Տեղեկատվական լայնա**ծավալ** արշավ է **ծավալել**»:

«Ըստ **նախապես նախատեսված** պայմանավորվածության...»

«Հայերը **օգտագործում են** հիմնականում կարմիր սոխ, որի **օգտակարությունը** շատ ավելի արդյունավետ է» (Յաննա, Հ1, խոհանոց):

«Էկոլոգիական աղետի վտանգն անխուսափելի կլինի»:

«**Համատեղ** արդյունավետ **համագործակցություն** ծավալել...»

Համատեղը ավելորդ է, որովհետև համագործակցությունը հենց համատեղ է լինում: Եղածը կարելի է հանդուրժել նաև երկրորդ **համա** մասնիկը գեղջելով:

«...պետք է դիսկուսիա սկսվի տարբեր ուժերի մեջ, որպեսզի այս **լուծումը** հանգուցա**լուծման** գնա» (Ազատություն, 1.7.2019, Բաղդասարյան, իրավաբան):

Գոնե ասելիք հանգույցը հանգուցալուցման գնա, թեև նորից ընդունելի չէր լինի հանգույց բառի անհարկի կրկնության առումով: Ինչն էր խանգարում պարզապես ասել՝ «...որպեսզի այս հանգույցը լուծվի»:

«Արդյոք հնարավոր է այս խնդիրների լուծման կարգավորումը զուտ օրենսդրական ճանապարհով» (Հ1, Գոհար Հայրապետյան, հաղորդավար):

Բայց չէ՞ որ լուծել և կարգավորել միևնույն բանն են նշանակում:

Վերի երկու–երեք օրինակներում տարբեր խոսողներ կրկնում են մոտավորապես նույն սխալը՝ **լուծում** բառը օգտագործելով **խնդիր** կամ **հարց** բառերի փոխարեն, ինչը ենթադրում է, որ սխալը պատահական լինելուց ավելին է:

4. Շարահյուսական ավելադրություններ (ավելորդաբանություններ)

Խնդրո առարկա խոսքային դրսևորումներում, որոնք համար-
ձակվում են անվանել «Ժամանակակից հայերենի բյուրոմեդիա-
կան ժարգոն», շատ են կապերի, շաղկապների, վերաբերականնե-
րի, միջանկյալ և մակաբույծ այլ բառերի անհարկի, բովանդակու-
թյամբ չպատճառաբանված կիրառությունները:

Երևույթը հատկանշվում է մանավանդ գրաբարյան մնացուկնե-
րի և դրանց աշխարհաբար կամ արդեն իսկ աշխարհաբարացված
հոմանիշի համադրմամբ. օրինակ՝ **մինչև առ այսօր** խիստ տա-
րածված թյուրիմացությունը:

Խոսողը ակնհայտորեն ցանկանում է գրագետ երևալ, ուստի
դիմում է գրաբարյան ձևերին, որոնք, սակայն, նրա համար իմաս-
տազրկված են և կատարում են սուսկ պերճանքի դեր, ուստի նա
հենց այդ պատճառով բնազդաբար դիմում է իրեն ավելի ծանոթ
աշխարհաբար հոմանիշին: Նոր սերունդը տառապում է իր ասածի
(լեզվի) անլիարժեքության և մինչև վերջ չհասկացվելու բարդույ-
թից և ասես հարկ է համարում անդադար դիմելու կրկնության
հետևյալ ձևերից մեկին՝

ա) օգտագործել օտար բառ,

բ) օգտագործել նախ օտար բառը և ապա անմիջապես դրա
հայերենը,

գ) նախ ասել հայերեն բառը և ապա այն թարգմանել օտար
լեզվի,

դ) արդեն իսկ օգտագործած հայերեն բառը իր և ունկնդրի հա-
մար «թարգմանել» հենց հայերեն մի այլ բառով, հիմնականում
առաջինի հոմանիշով:

Հավանաբար հենց վերը ասվածով պիտի բացատրել նաև նույն խոսողների՝ ասելիքը սաստկացնելու խիստ նկատելի հակումը՝ որպես տիրական ոճ, որի «արտահայտչական միջոցներից» մի քանիսն էլ նկարագրվող կրկնություններն են:

Օրինակներ՝

«Չնայած, իրականում, հիմնականում նոր երգեր են ...»:

Միմյանց կից շարված է երեք բառ, ընդ որում՝ երկուսը նույնահանգ, որոնք թեկուզ և կարելի է իմաստով պատճառաբանված համարել, բայց ոչ ոճական առումով տանելի: Ավելորդ է հատկապես **իրականում**-ը:

«Նույնիսկ պատկերացում անգամ չունես...»:

Կամ **նույնիսկ**, կամ **անգամ**, երկուսը միասին սխալ է, որովհետև դրանք՝ որպես նույն բայի սաստկացուցիչ լրացումներ, հոմանիշներ են:

«Ես ուզում եմ *ասել, նշել, շեշտել* իմ կարծիքով...»: Եվ այս ամենը՝ միայն սկսելու համար:

«Այս կամ այն տարբեր պատճառներով...»:

այս կամ այն-ը և **տարբեր**-ը նույն բանն են նշանակում, հետևաբար դրանցից մեկը ավելորդ է:

«Օրինակի համար, որպես օրինակ...»:

«Ցանկացած *պարագայի դեպքում*...» (Վահրամ Բաղդասարյան):

Ունենք. ամեն պարագայում, ամեն դեպքում, համենայն դեպս (գրաբար):

«Դա *միայն զուտ* իրավական հարց չէր»:

Ջուտ կամ **միայն**. մեկն էլ բավական է:

«Ոչ թե միայն զուտ հոգևոր... այլև...»:

Ոչ թե միայն–ը ոչ թե և ոչ միայն՝ երկու տարբեր իմաստ կրող շաղկապների անգրագետ միակցումն է, որոնցից մեկը պիտի ընտրել: Ընտրություն պիտի կատարել նաև միայն–ի և զուտ–ի միջև. «Ոչ միայն հոգևոր..., այլև...»:

«Խնդիրը զուտ ուղղակի քանակական ցուցանիշեր ցույց տալու մասին չի...»:

Զուտ–ը որոշիչ է, ածական. «զուտ քանակական ցուցանիշեր», ուղղակի–ն ձևի պարագա է՝ մակբայ. «Ուղղակի ցույց տալ»: Իսկ իրար կողքի անորոշ է դառնում դրանց տեղն ու դերը նախադասության մեջ:

Սխալ է նաև՝ «...խնդիրը այն մասին չէ» կամ «խնդիրը... ցույց տալու մասին չէ»:

Պետք է լինի՝ «Խնդիրը ... ցույց տալը չէ, այլ...»: Կամ՝ «Խնդիրը այն չէ, թե..., այլ...»:

Համեմատել.

«Խնդիրը միայն քանակական ցուցանիշեր ներկայացնելը չէ»:

«Իհարկե, պատասխանատվությունը շատ բավական մեծ է»:
(Սարգիս Մակունց, 1in TV, 5 հուն., 2019)

Շատ, թե՛ բավական. չէ՛ որ դրանք տարբեր չափեր են նշանակում:

«Վ. Գ–ն անդրադարձել է այդ պնդումներին, ինչպես նաև պատասխանել է այլ հարցերի, *օրինակ, այդ թվում*, թե ինչ դեր է ունեցել իր հայրը իր կարիերայում և իր առաջխաղացման գործում: (Ազատություն, հաղորդավար, 19 հունիս, 2019):

Կամ՝ *օրինակ*, կամ՝ *այդ թվում*, որովհետև երկուսն էլ նախադասության մեջ նույն դերն են կատարում (ակնարկում է պատասխանված նույն հարցը կամ հարցերը): Ակնհայտ է, որ խոսողը իր

օգտագործած բառերի բովանդակությանը անտեղյակ կամ կիսով չափ է տեղյակ, և դրանք օգտագործում է միայն մեքենաբար:

«... որը գոհացրել է այդ կողմերից յուրաքանչյուրին իր *շահերի ակնկալիքի* տեսանկյունից»:

Իր շահերի տեսանկյունից և իր ակնկալիքի տեսանկյունից նույն բաներն են, ուստի դրանցից մեկը ավելորդ է:

Կարելի է նաև՝ «...որը գոհացրել է այդ կողմերից յուրաքանչյուրին՝ իր ակնկալած շահի տեսանկյունից»:

«*Բոլոր դեպքերում, անկախ ամեն ինչից...*» (Արման Նավասարդյան):

Այս բառակապակցությունները գրեթե նույն բանն են նշանակում, իսկ իրականում դրանք ոչ մի բան էլ չեն նշանակում, ուստի դրանցից առնվազն մեկը ավելորդ է: Դժբախտաբար, վարակը ամբողջն պաշտպանված ավագներին էլ է վնասում:

«*Էնպիսի տպավորություն է, որ կարծեք թե ...*» (Խոսրով Հարությունյան):

Երկու բառակապակցություններն էլ նույն բանն են նշանակում, և, չգիտես ինչու, դրանք միացված են **որ** շաղկապով:

«Բայց, *այնուամենայնիվ, դրանով հանդերձ* նրանք շատ ավելի ուշադիր են» (Դավիթ Ալավերդյան):

«Մեր չշտապելը պայմանավորված է *նաև հենց* դրանով» (1in TV, Լիլիթ Մակունց, 24.7.19):

Նաև դրանով և հենց դրանով նույն բանը չեն նշանակում:

Եթե ձեր «...չշտապելը պայմանավորված է նաև դրանով», ուրեմն եղև են նաև այլ պատճառներ, իսկ եթե ձեր «... չշտապելը պայմանավորված է հենց դրանով», ուրեմն դա միակ պատճառն է, և այլ պատճառներ չեն եղել, հետևաբար՝ դուք պիտի հստակ կողմնորոշվեք և ընտրեք այդ երկու բառերից միայն մեկը:

5. Գրաբարյան ձևերի սխալ օգտագործումը

«Որպես», «որպիսի», «որպեսզի» բառերից իյուրաքանչյուրը քերականական ինքնուրույն ձև է և արտահայտում է առանձին իմաստ:

Որպես–ը համեմատական կապ է, **որպիսի**–ն դերանուն ածական է, նույնպես համեմատական իմաստով, իսկ **որպեսզի**–ն նպատակի շաղկապ է: Արդ հայաստանյան ժամանակակից խոսակցական լեզվում այս երեք բառերի խառնուրդից առաջացել է «**որպիզի**» հնչյունախումբը, որը հայերեն բառ համարվելու ոչ մի հնարավորություն չունի և հետևանք է գրաբարյան ձևերի թույլ իմացության և սխալ գործածության:

«Ես համաձայն չեմ, որպիզի մեր սահմանադրությունը հաճախակի փոփոխման ենթարկվի» (վարչապետ):

«Հայտնի է, որ *արդեն* հավաքվել է *այս պահի դրությամբ*, *համարյա*, *գրեթե* տաս միլիոն դոլար» (1 in TV, հաղորդավար):

Արդեն–ը և **այս պահի դրությամբ**–ը հոմանիշ ժամանակի պարագաներ են, ուստի դրանցից մեկը ավելորդ է:

Համարյա, **գրեթե** հոմանիշ որոշիչներ են, ուստի դրանցից մեկը ավելորդ է:

«...Եվ, *անշուշտ*, *իհարկե*, չի կարելի մոռանալ...»:

Անշուշտ–ը և **իհարկե**–ն նույն բանն են նշանակում, դրանցից մեկը ավելորդ է:

«Մոսկվայի համար *այստեղ*, *իհարկե*, կան մի շարք անհարմարություններ, սակայն, *խորքային իմաստով*, *իհարկե*, Կրեմլը, *անշուշտ*, լավ է պատկերացնում...» (8 rd News):

Խոսողը ակնհայտորեն դժվարանում է իր միտքը ձևակերպել և դիմում է ավելորդ բառերի օգնությանը. կրկնված **իհարկե**–ն և մեկ **անշուշտ**–ը, գումարած **սակայն**–ին և **խորքային իմաստով** բացատրականին, նախադասությունը դարձնում են խախուտ ու «խուսափողական» (վերլուծաբան):

«Նախ *առաջինը* հարկավոր է նշել...»:

Նախ–ը հենց *առաջին* է նշանակում, ուրեմն երկրորդը, այսինքն՝ **առաջին**–ը, ավելորդ է: Բայց այս **նախ առաջին**–ը այնպես է իր տեղը տաքացրել մեր ոսկեղենիկում, որ չի թվում, թե որևէ տեսակի ու գույնի հեղափոխություն կկարողանա նրան տեղից պոկել:

«Նախ, *ի սկզբանե* պետք է ասեմ...»:

Ի սկզբանե–ն հին հայերենում՝ գրաբարում, նշանակում է *սկզբից* կամ *սկզբում*, ուրեմն **նախ**–ը ավելորդ է. կամ **նախ**, կամ **սկզբում**, բայց երբեք երկուսը միասին:

«...Ինքն էլ *մինչև ցմահ* մնալու է նախագահ»:

Ց գրաբարյան նախդիրը հենց **մինչև** է նշանակում, ուստի **մինչև**–ը ավելորդ է:

«...*Խնդրո առարկան վերաբերում է...*» (Վարդիթեր, Շանթի հաղորդավար):

ա. **Խնդիրը** և ո՛չ թե **խնդրո առարկան**:

բ. **Խնդիրը** ո՛չ թե *վերաբերում է*, այլ՝ **խնդիրը** այն է, **խնդիրը հետևյալն** է:

Տարածված է նաև «...*խնդիրը նրանումն է կայանում, որ...*» ձևը, որից նույնպես պիտի խուսափել:

«...Որպեսզի, *մեկընդմիշտ, վերջնականապես* էդ հարցը լուծվի...»:

Բայց միթե այդքան դժվար է իմանալ, որ **մեկընդմիշտ**–ը և **վերջնականապես**–ը նույն բանն են նշանակում:

Բայց ո՛չ, խոսողի համար կարծես թե **մեկընդմիշտ**–ը բավականաչափ «մեկ–ընդ–միշտ» չլիներ, և ունկնդրին բան հասկացնելու համար նա պիտի դիմեր **վերջնականապես**–ի օգնությանը: Իսկ

երևույթի ավելի լուրջ պատճառը գրաքարյան **մեկընդմիշտ** տարրի առկայությունն է, որը ժամանակակից խոսողի համար իմաստաթափվել և օգտագործվել է մեքենաբար՝ որպես «գրագետ» մթնոլորտ ձևավորող, ոչ խոսքային տարր, իսկ բուն բովանդակությունը վստահվում է դրա աշխարհաբար հոմանիշ **վերջնականապես** բառին:

«Ես կարծում եմ, որ լավագույն տարբերակը՝ *միայն և բացառապես* ո՛չ թե հիմնվել *կողքի* կարծիքների վրա, այլ յուրաքանչյուր մենք մեր կարծիքը ձևավորենք»(1in TV, Լիլիթ Մակունց, 24 հուլ., 2019):

Այս հանձարեղ «աֆորիզմի» հեղինակը և, մանավանդ, այս փառահեղ լեզվամտածողության կրողը իրավունք ունի այդպես *միայն և բացառապես* հարգելու ինքն իր կարծիքը և այդպես բացարձակապես արհամարհելու *կողքի* (դուք հասկացե՛ք՝ այլոց կամ ուրիշների) կարծիքները: Սրան կասեն արմատական դեմոկրատականություն կամ, եթե կուզեք, ժողովրդավարություն:

«Խնդիրը *միանշանակ* պիտի լուծվի *բացառապես* իրավական և օրենքի դաշտում, իրավական հարթակներում և օրենքի դաշտում (1in TV, Լիլիթ Մակունց, 24 հուլ., 2019):

Այստեղ **միայն**-ին եկել է փոխարինելու հանրահայտ **միանշանակ**-ը՝ իր երեք հավելյալ վանկով և բացարձակ անիմաստությամբ: Սրան պիտի գումարել նաև **իրավական և օրենքի դաշտում, իրավական հարթակներում և օրենքի դաշտում** կրկնությունների շարանը:

«Նժդեհի գործունեությունը, որը *միայն, բացառապես* նվիրված է եղել նրան, որ *հանկարծ որևէ դեպքում* Թուրքիան չունենա հնարավորություն հարձակվելու Հայաստանի վրա» (Վիզեն Ենգիբարյան, լրագրող):

Երբ նույն մարդն է իր սխալը կրկնում, վարակ է, իսկ երբ մեկից ավելի մարդիկ են նույն սխալը կրկնում, համաճարակ է:

«*Ընդհանրապես* պիտի արգելվի *առհասարակ* այդպիսի արտահայտությունների տարածումը»:

Երկու մակբայները նույնիմաստ են, ուստի մեկը ավելորդ:

«Մենք *ուղղակի*, *պարզապես* այդ ռեսուրսները չունենք»:

«*Գուցե սա երևի...*»

Արդեն ամաչում եմ կրկնել, որ սրանք նույն բանն են նշանակում՝ հավանականություն:

«Անդրադառնալու են *ներկա*, *ընթացիկ* զարգացումներին»:

«*Հիմա, տվյալ պարագային ...*»

«*Բազմիցս անգամ* ասել եմ, հիմա չեմ ուզում *կրկնվել*» (Արթուր Հովհաննեսյան):

Բազմիցս–ը գրաբար նշանակում է բամբաթիվ անգամներ:

«*Մի քանի անգամ բազմիցս* նշվել է...»:

Եթե չասեր **բազմիցս**, իրեն թվում է՝ չէինք հասկանա իր **մի քանի անգամ**–ը:

«...Այդ բանը ես *դեռևս*, *ոչ մի տեղ*, *առայժմ* չեմ տեսել»:

Բավական էր ասել՝ նման բան ես չեմ տեսել, իսկ սաստկացման նպատակով ավելացնել «ոչ մի տեղ» կամ «կյանքումս»: Մյուս երկու մակբայները թե՛ սխալ են և թե՛ ավելորդ: **Դեռևս** և **առայժմ** բառերը համանիշ են, և ակնարկում են ծանոթ և սպասված մի բան, այնինչ բերված օրինակը բոլորովին տարբեր և նույնիսկ հակառակ իրավիճակ է ներկայացնում: Այնտեղ խոսողը լսել է մի բան, որից անակնկալի է եկել և, իբր, փորձում է **առայժմս** և **դեռևս** բառերով իր սաստիկ զարմանքը արտահայտել, մինչդեռ դրանք ամենևին սաստկական և զարմանքի իմաստ չեն պարունակում և հուզականորեն գրեթե չեզոք են:

«Հետևաբար՝ աննվազն գոնե նման հայտարարություններ պիտի չանեին»:

Երեք նման բառ իրար հետևից շատ է, մանավանդ որ դրանցից երկուսը հոմանիշներ են:

Ըստ էության

Թվում է՝ եթե Հայաստանում մի շարք բառերի և բառակապակցությունների օգտագործումը «օրենքի ուժով» արգելվի, ոչ աննշան թվով մտավորականներ մեկեն կկորցնեն հայերեն խոսելու իրենց ունակությունը: Դրանց կարկառուն ներկայացուցիչներից մեկն էլ այս **ըստ էության**–ն է: Այլ կարկառուն և մշտաժողով ներկաներ են՝ **այնուամենայնիվ, հիմնականում, առանցքային, միանշանակ, դիտարկել, կայանում է նրանում, իրականացնել** *ևն*, ևն, որոնք, կարող եմ ասել, տասից ինը անգամը օգտագործվում են, ըստ էության, որպես հաղորդաժամ լցնող, գրագիտություն վաճառող և ունկնդրի շնչառությունը լրջորեն խաթարող մակաբույծ բառեր (իրենք՝ խոսողները, ընդհակառակը, առանց այդ բառերի շնչել անգամ կդժվարանան):

«...Եվ քանի որ ընթացքը, *ըստ էության, մեծ հաշվով, դրական իմաստով* տեղաշարժ չկա, *ինչպես* որ սպասում էինք ...» (Ժիրայր Սեֆիլյան):

«*Ըստ էության* տղամարդու և կնոջ ձայնի տարբերությունը *հիմնականում կայանում է նրանում*, որ...»

«*Իրականում, ըստ էության...*»

«Արտավազդ արքայի ծննդյան թվականի և վայրի մասին, *ըստ էության*, ոչինչ հայտնի չէ» (պատմաբան):

Իսկ թե ի՞նչ է, ըստ էության անում այս **ըստ էության**–ը նախադասության մեջ, նույնպես հայտնի չէ:

«...Որովհետև, ըստ էության, ճիշտն ասած, ե՛ս այդ հարցը բարձրացրեցի...» (Ստեփան Սաֆարյան, 1in TV, 25 july, 2019):

Երբ ասացիր **ճիշտն ասած**, հասկացանք և հավատացինք, որ հարցը դու ես բարձրացրել, թե՛ դրել, բայց դրանում ի՞նչ գործ ունի **էություն**–ը, ըստ որի՝ դու բարձրացրել կամ դրել ես հարցը:

Բայց հասկացիր, սիրելի՛ ունկնդիր, այստեղ **ըստ էության** գրաբարյան և ըստ էության փիլիսոփայական հասկացությունը օգտագործվել է հենց **ճիշտն ասած**–ի իմաստով:

«...Մեծ արաքսյան հովիտը, ըստ էության, շատ կարևոր ճանապարհ ենք մենք համարում: Պաշտպանության նախարարությունը էսօր էլ այդ ճանապարհն օգտագործում է, *ցավոք*, ելնելով իրավիճակի, ճանապարհի վիճակից, ինչը շատ, ըստ էության, վատ է, բայց ռազմական տեխնիկայի շարժ, *իհարկե*, էդ ուղղությամբ, երբ որ պետք է, *բնականաբար*, իրացվում է (բարձրաստիճան բանակային):

«Որովհետև, տեսնք, ըստ էության, *համենայն դեպս...*»:

Խոսողը հաջորդ միտքը ձևակերպելու փնտոտուքի մեջ է, իսկ մինչ այդ մեկը մյուսի հետևից շարում է բառեր, որոնք թռչնային երջանիկ անպատասխանատվությամբ բազմում են խոսքի թելին:

Այնուամենայնիվ

Գրաբար է, որը թարգմանվում է՝ **այն ամենով**, և ժամանակակից հայերենում օգտագործվում է որպես զիջական շաղկապ: Նույն իմաստով ունենք նաև **այդուհանդերձ**, **դրանով հանդերձ**, **այդ բոլորով հանդերձ**, **չնայած դրան** ձևերը:

«Ի դեպ, ես կուզենայի նշել, որ, *այնուամենայնիվ*, կա մի կարևոր փաստ, որ պետք է աչքաթող չանել...»:

Տարրական դասարանում մեզանից պահանջում էին անգիր անել «Բառերով արտահայտված յուրաքանչյուր ամփոփ միտքը կոչվում է նախադասություն» ձևակերպումը և, իհարկե, չէին էլ

մտահոգվում, թե մենք ինչ կհասկանանք այդ բառակույտից: Չէին մտահոգվում, որովհետև իրենք էլ դրանից բան չէին հասկանում: Հիմա, երբ ինձ թվում է, թե ինչ–որ չափով կռահում եմ այդ բանաձևի միտքը, ուզում եմ ասել, որ վերոնշյալ նախադասության ամփոփ միտքը հետևյալն է. «Ուզում եմ նշել մի կարևոր փաստ»: Մնացյալը ավելորդաբանություն է:

«Բայց *այնուամենայնիվ, դրանով հանդերձ* նրանք շատ ավելի ուշադիր են» (Դավիթ Ալավերդյան):

«...Եվ *հավանաբար, այնուամենայնիվ*, կտուժի թուրք կառավարությունը» («Շանթ», Արտյոմ Երկանյան):

Այս նախադասությունը արտահայտում է ոչ թե մեկ, այլ երկու, ընդ որում, հակադիր մտքեր՝

1. թուրք կառավարությունը *հավանաբար* կտուժի,

2. թուրք կառավարությունը *այնուամենայնիվ* կտուժի:

Առաջինը արտահայտում է ենթադրություն, կասկած, երկրորդը՝ վստահություն, համոզմունք, իսկ պատճառը մակբայների մեքենայական շարադասումն է:

«Եվ *այսքան թերություններով հանդերձ, այնուամենայնիվ...*»,

«Եվ *բացի դրանից, այնուամենայնիվ...*»,

«*Ըստ էության, այնուամենայնիվ...*»:

«... *Այսինքն, հետևաբար, ուղղակի, վերատին* ես ուզում եմ հիշեցնել...»

Դժվար է անգամ երևակայել, որ խոսողը, այս ամբողջ բառաշարը արտասանելով, դեռ նոր պիտի անցնի իր բուն ասելիքին (Ստեփան Սաֆարյան, 1 in TV, 25 July, 2019):

«*Այնուամենայնիվ*, դուք համարում եք, որ Հայաստանի ժողովուրդը դուրս է եկել Նիկոլին իշխանության բերելն, թե՛ Սերժին

մերժելու համար, *այնուամենայնիվ*» («Նոյան Տապանի» հաղորդավար):

Սա արդեն... խոսողը այնքան է գերված–տարված իր **այնուամենայնիվ**-ով, որ իր նախադասությունը սկսում և ավարտում է նրանով այն դեպքում, երբ այդ բառի անհրաժեշտությունը ընդհանրապես չկա:

«*Պարզապես* ջրի ռեսուրսները, *ցավոք*, ենթարկվում են անխիղճ կողոպուտի...»:

Պարզապես մակբայը այստեղ համարյա կորցրել է իր նյութական բովանդակությունը և վերածվել սաստկական վերաբերմունք արտահայտող բառի, հետևաբար **պարզապես** և **ցավոք** բառերը վրդովմունք և ցավ են արտահայտում նույն ստորոգյալի համար, բայց չգիտես ինչու են անջատված իրարից: Եթե դրանք բերենք իրար կողքի, կստացվի. «Ջրի ռեսուրսները, *պարզապես*, *ցավոք*, ենթարկվում են անխիղճ կողոպուտի...», բայց նախադասությունը դրանով չի փրկվի, որովհետև **պարզապես**–ը հնչերանգով ավելի շուտ կապվում է **ցավոք**–ին, քան կողոպուտելուն, ու եթե խոսողի համար այդքան դժվար է հրաժարվելը տվյալ դեպքում համատեղ ոչինչ չասող երկու բառերից որևէ մեկից, կառաջարկեինք **ցավոք**, **պարզապես**–ը, թեև **ցավոք**–ը *անխիղճ կողոպուտի* համար *պարզապես* ծիծաղելի է:

Մեկ այլ նմուշ.

«*Իրոք*, տարիքային տարբերություն *բացարձակապես* չկա» («Երկիր»):

Ինչպես տեսնում եք, նույն կառույցն է, թեև ավելի տանելի է. **իրոք**–ը բավական է, որովհետև **չկա**–ն ինքնին բացարձակ է:

Նույն շարադասությունն է

«...Իրավիճակ էր, որ Հայաստանի ոչ լեգիտիմ կառավարությանը *բացարձակապես* զրկվեց *ընդհանրապես* Վիեննայի օրակարգերի համար կոիվ տալու (հնարավորությունից)» (Հակոբ Բաղայան):

Ընդգծված մակբայները նույն պարագայական իմաստն են արտահայտում, հետևաբար նրանցից մեկը ավելորդ է.

«Որովհետև, դրա պատճառը այն է որ...»:

Որովհետև–ը հենց նշանակում է՝ դրա պատճառը այն է, որ...

«Նորից, մեկ անգամ ևս կրկնում եմ...» կամ «Նորից եմ կրկնում»:

Շատ տարածված ավելադրություն է. նախ ամոթ է հիշեցնել, որ **կրկնում եմ** բայը արդեն իսկ արտահայտում է **նորից**–ի և **մեկ անգամ ևս**–ի իմաստը, ուստի **նորից** բառից հաստատ պիտի հրաժարվել, իսկ **մեկ անգամ ևս**–ը կարելի է օգտագործել, եթե խոսողը ուզում է հիշեցնել իր՝ արդեն իսկ նվազագույնը մեկ անգամ կրկնածի մասին, բայց հաճախ այն, ինչպես նաև **նորից**–ը օգտագործում են հենց առաջին կրկնության պարագային: Այստեղ միայն **կրկնում եմ**–ը լիուլի բավական է:

«Նա **երբեք** մեզ նվաստացնելու *ոչ մի* առիթ բաց չի թողնում»:

Երբեք–ը և **ոչ մի**–ն նույն իմաստն են արտահայտում, ուստի դրանցից մեկը բավական է:

«Ի *օգուտ* մեր երկրի, մեր ժողովրդի բարգավաճման *համար*» (Գագիկ Ծառուկյան):

Ի նախդիրը գրաբարում նշանակում է նաև համար, հետևաբար *ի օգուտ* (յօգուտ/հօգուտ) նշանակում է *օգուտի համար*, ուստի **համար**–ը ավելորդ է: Պետք է ասել. «Մեր երկրի և մեր ժողովրդի բարգավաճման *համար*» կամ «Ի *օգուտ* մեր երկրի և մեր ժողովրդի բարգավաճման»: Իսկ ավելի «անկուսակցականը»՝ պարզապես «*Հօգուտ* մեր երկրի և մեր ժողովրդի»:

Նույնն է.

«...Նվիրատվություններ է կատարել *ի նպաստ* թանգարանի և հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանի կառուցման *համար*»:

«...Ուղղելով դրանք *ի նպատակ* կորոնավիրուսով պայմանավորված ճգնաժամի մեղմացմանը...»:

Ի նպատակ–ը ավելորդ է:

«Փաստաբանների ամբողջ ունակությունները և իրենց հնարավորությունները պետք է *ի նպատակ դնեն* իրենց պաշտպանյալին էֆեկտիվ պաշտպանություն կազմակերպելու հարցում»:

Ի նպատակ դնել դարձվածքը ընդհանրապես սխալ է: Խոսողը այն շփոթել է գրաբարյան «*ի սպասակ դնել...*» և «... *դնել ի նպատակ...*» դարձվածքների հետ:

Համեմատել.

ա) Փաստաբաններն իրենց ամբողջ ունակությունները և հնարավորությունները պետք է *ներդնեն* (ներգործական) *ի նպատակ* իրենց պաշտպանյալի էֆեկտիվ պաշտպանության (կարծում եմ, որ հանուն խոսքի սեղմության՝ կարելի է հրաժարվել **կազմակերպելու հարցում** կապակցություն):

բ) Փաստաբանների ողջ ունակությունները և նրանց հնարավորությունները պետք է *ի սպասակ դրվեն* (կրավորական) իրենց պաշտպանյալի էֆեկտիվ պաշտպանության:

Տվյալ դեպքում խոսողի ընտրությունը առաջին տարբերակն է:

Գրաբարամոլությունը, որպես գրագիտության ցուցանիշ, այնքան է խորացած և տարածված, որ ոմանց մղում է «նորարարության»:

«Մեր խնդիրները... *ի հակառակ* Հունաստանի...»:

«*Ի համեմատ* այլ հանքերի...» (Գևորգ Սաֆարյան):

Վերի երկու օրինակներում.

Գրաբարյան ի կապի հետ որպես կապող բառ օգտագործված **հակառակ** և **համեմատ** բառերը արդեն իսկ կապ են և, որպես այդպիսին, լիարժեք կատարում են իրենց դերը, հետևաբար՝ **ի**–ն ավելորդ է: Իսկ **ի** կապի հետ որպես կապող բառ՝ անհրաժեշտ է

գոյական կամ գոյականաբար առնված որևէ բառ, ինչպես՝ **ի նպաստ, ի շահ, ի նշան, ի գիտություն** են:

Թյուրիմացություն է նաև.

«Ես կարծում եմ, որ կենտրոնական բանկի մեսիջը *առ այն* էր, որ...» (Մանն Թանդիլյան):

Առ-ը ավելորդ է:

«Ցանկալի է, որ *շատ առավել հաճախ* հնչեն այսպիսի երգեր»: Մենք ունենք **ավելի հաճախ, շատ հաճախ, շատ ավելի** ձևերը, իսկ այստեղ խոսողը, դրանք իրար խառնելով և **ավելի** բառի փոխարեն **առավել** գրաբարյան ձևը օգտագործելով, ճոռոմաբանում է:

«Ո՞ր տարիքի երեխաներն են *առավել հաճախ* հիվանդանում» (գովազդ). սա էլ է վարակված:

«*Ըստ արժանվույն կերպով...*»

Ըստ արժանվույն-ը գրաբարում հենց արժանի կերպով է նշանակում, ուստի **կերպով** բառը ավելորդ է:

«*Ներկայիս պայմաններում...*»

Ներկայիս-ը գրաբարում նշանակում է ներկայում, ուստի **իս**-ը ավելորդ է: Պետք է ասել՝ **ներկա պայմաններում**, կամ միայն՝ **ներկայիս**: Կան միայն գրաբարը, կան միայն աշխարաբարը, բայց ոչ երկուսը միասին:

Ավելի գրաբարագետը.

«*Այսօրվա ներկայիս իրավիճակում*»

Պիտի լինի՝ **ներկա իրավիճակում** կամ **այսօրվա իրավիճակում**:

«*Ըստ իս, իմ կարծիքով*՝ դա չափազանցություն է»:

Ըստ իս-ը գրաբարում հենց **իմ կարծիքով** է նշանակում:

«Ի շնորհիվ իր հոգատարության...»

Ի–ն ավելորդ է: Պիտի լինի՝ **շնորհիվ**, որ գրաբարյան **շնորհ**–ի գործիական հոլովն է և «կթարգմանվի»՝ **իր հոգատարության շնորհիվ**: Խոսողը հավանաբար շփոթում է **ի պատիվ**–ի հետ:

Շնորհիվ բառը՝ որպես *շնորհ* բառի գործիական հոլով, ունի միայն դրական իմաստ, սակայն այն հաճախ է օգտագործվում բացասական իմաստով՝ փոխարինելով **պատճառով** բառին: Չի կարելի ասել՝ **աննպաստ եղանակի շնորհիվ**:

Ընդհուպ. 1. Իսկույն, անմիջապես: 2. Ի մոտո, մոտիկից: 3. Կիպ, կաչելու աստիճան: 4. Ահա, հենց այժմ, հրես: 5. Ընդհուպ մինչև, ներառյալ: 6. Ընդհուպ մոտ, ընդհուպ մոտենալ:

«...Փաստն այն է, որ մարդիկ չեն կարողանում ստանալ իրենց ընդհուպ մինչև մեկ միլիոնի հասնող աշխատավարձային պարտքը: Ընկերությունը նրանց յուրաքանչյուրին ընդհուպ մեկ միլիոն դրամ է պարտք»: Երկու անգամ կրկնվող **ընդհուպ**–ից հնարավոր, առավել ևս անհրաժեշտ է հրաժարվել:

«Ընդհուպ սոցիալական կայքերում կան, էսպես ասած, ընդհուպ հանդես եկող ֆեյքեր, ընդհուպ նախկին իշխանությունների ներկայացուցիչների հասցեին, թե, իրոք, դա մեր հեղափոխական շրջանակների հետ կապ ունի» (Նիկոլ Փաշինյան) Առանց մեկնաբանության:

«Ինչ որ *ոմն*...»

«Որևէ *ոմն*...»

«*Ոմն* մեկը...»

«Բայց դա չի նշանակում, որ *ոմն մեկը* կարա հայ ազգի դեմ ինչ–որ դավեր խաղալ» (perfect TV, July 10, 2019):

Ոմն–ը նշանակում է հենց **մեկը**, **որևէ մեկը**, **ինչ–որ մեկը**:

«...Որը, *ըստ* մասնագետների *գնահատմամբ*...» («Նոյան Տապանի» հաղորդավար):

Պիտի լինի՝ **ըստ մասնագետների գնահատման** կամ **մասնագետների գնահատմամբ** (առանց **ըստ**–ի):

Սխալ	Ճիշտ
<p>Ինչ որ <i>ովն...</i> Որևէ <i>ովն...</i> <i>Ովն</i> մեկը...</p>	<p>ովն կամ ինչ-որ մեկը ովն կամ որևէ մեկը ովն կամ մեկը</p>
<p>մինչև առ այսօր շատ քաջ ծանոթ ներկայիս պայմաններում քանիցս անգամ բազմիցս անգամ</p>	<p>մինչև այսօր կամ առ այսօր շատ ծանոթ, քաջ ծանոթ կամ քաջածանոթ ներկայիս կամ ներկա պայմաններում քանիցս կամ անգամներ բազմիցս կամ անգամներ</p>

6. Հարաբերական դերանուններ

Խոսակցական հայերենում **որ** հարաբերական դերանվան բոլոր հոլովների փոխարեն օգտագործվում է նույնիսկ **որ** անորոշ ուղղական հոլովը.

Գրական՝

Մարդուն, որին դու փնտրում ես, ես ճանաչում եմ:

Խոսակցական՝

Մարդուն, որ դու փնտրում ես, ես ճանաչում եմ:

Գրական՝

Այն մարդուց, որից գումար ես վերցրել, քեզ է փնտրում:

Խոսակցական՝

Այն մարդը, որ դու գումար ես վերցրել, քեզ է փնտրում:

Ժամանակակից գրական հայերենի խնդրո առարկա տարբերակում այս խոսակցական **որ**-ը, մեկ հաղթական քայլ ևս կատարելով, իր ուղիղ ձևով կատարում է մյուս հոլովների «գործը»՝ հայոց լեզուն նաև «հարստացնելով» **որը որ, որոնք որ, ով որ, ովքեր որ, նրանից որ** ձևերով: Հաճախ խոսակցականից գրական լեզու են թափանցում նաև **երբ որ, ինչպես որ, որքան որ** և նույնիսկ **որովհետև որ...** սխալ ձևերը: Այլ խոսքով՝ **որ**-ը բացառապես որպես չթեքվող շաղկապ է ընկալվում և ոչ որպես հոլովառու դերանուն:

7. Բարդ բառերում բայարմատի փոխարենն օգտագործվում է դերբայական ձևը

«Նրան դուր չի գա քո պահելաձևը»:

Մենք նույն կառուցվածքով (դերբայ + ա + ձև) ունենք **վարվելա-կերպ, գործելակերպ, մտածելակերպ** ևն ձևերը, բայց ունենք նաև (արմատ + վածք) **պահվածք, կեցվածք** և (արմատ + մունք) **վարմունք, վերաբերմունք...** ձևերը:

«...Ինչ–որ մեկը թիկունքից հարվածում է է. Մ–ին. նմանատիպ գործելաոճը դատապարտելի է»:

Գործելաոճ բառը թե՛ բառակազմական, և թե՛ ոճական առումով սխալ է, որովհետև խնդրո առարկա է ոչ թե ոճը կամ ձևը, այլ ինքը արարքը: Նույնիսկ **գործ** բառը տուրուղմփոցին հարիր բառ չէ. կատարվածը կարելի է անվանել հենց արարք:

Խոսելաժամ: Առաջարկում ենք **խոսաժամ** ձևը:

8. Բայի բոլոր սեռերը կրավորական դարձնելը

Երբ բայի ներգործական (նորմալ) ձևը փոխարինվում է նրա կրավորական ձևով:

Վերաբերել – վերաբերվել

Կրավորականացման ամենատարածված և «տեղ ընկած» դրսևորումն է **վերաբերել** և **վերաբերվել** բայերի պարագան:

Այս երկու բայերը մյուս բայերից տարբերվում են նրանով, որ, չնայած իրենց նույնական ծագմանը, բոլորովին ինքնուրույն իմաստով բայեր են, այսպես.

Վերաբերել. ինչ–որ մեկի կամ բանի առնչվել, կապ ունենալ:

«Այդ խնդիրը քեզ բոլորովին չի վերաբերում, դա վերաբերում է միայն ինձ»:

Վերաբերվել. ինչ–որ մեկի կամ բանի նկատմամբ վերաբերմունք ցուցաբերել կամ ունենալ:

«Ես այդ խնդրին շատ լուրջ եմ վերաբերվում»:

Ուստի դրանցից մեկի արտաքսումը և փոխարինումը մյուսով ոչ մի իմաստային արդարացում չունի, իսկ թե կատարվածը ինչ ազդեցության հետևանք է, ինձ համար պարզ չէ:

Այլ օրինակներ.

«...նույնը վերաբերվում է ՍԴ–ի նախագահին»: (Ն. Փ., վարչապետ)

«...այդ փաստաթուղթը վերաբերվում է ... լիազումար նիստին»:
(Վլդ. Վարդանյան)

«...որին ենթադրաբար վերաբերվել է դատավորների քննազտման կամ վեյտինգի գործը»:
(Լևոն Բարսեղյան)

Երկրաչարժից **տուժվածներ.** պիտի լինի **տուժածներ:**

Նորից կրկնվում եմ. ուզում է ասել՝ կրկնում եմ:

Մենք իրար հետ վիճվեցինք:

Չփորձվես ինձ հետ հակաճառել:

Ոմանք սովորական պաշտոնյաներ են լինելու, ինչ-որ մարդիկ էլ՝ ձախողվածներ:

«...Հարգանքի տուրք մատուցելու իրենց կյանքը հայրենիքի անկախության զոհաբերվածների հիշատակին» (Ազատություն, հաղորդավար, 22 սեպտ., 2019):

9. Բարդ և ածանցավոր բառերը իրենց բաղադրիչներին բաժանելը

Վերհիշել–վեր հիշել

«Իսկապես ժամանակն է, որ մենք վեր հիշենք...» (Հ 1, հաղորդավար)

Ներմուծել–ներ մուծել

«...մենք ներ ենք մուծում» (Վարչապետ Տ. Սարգսյան):

Վերլուծել–վեր լուծել

«Վեր ենք լուծում»:

Ներկրել–ներ կրել

«ներ ենք կրում»:

10. Դերանուններ

Լեզվի աղքատացման աղաղակող փաստ է նա անձնական դերանվան օգտագործումը այն ցուցականի փոխարեն՝ խախտելով նաև անձի և իրի առման օրենքը:

«Ամբողջ խնդիրը նա է, որ...»: Առարկաների համար պիտի ասել՝ **այն է**:

«...Եվ մեզ համար ամենադրականը նա ա, որ...»:

«Հիմա շատ է խոսվում նրա մասին, որ այս դատարանը ...» (1 in TV հաղորդավար, 22 հուլ., 2919):

«31–41 կետերը նրա մասին ա, որ...» (Ն. Փ.):

«...Եվ մեր համար ամենադրական կետը նա ա, որ»:

«Ա. Վ–ի հեռացնելու պատճառը նա է, որ...» (Perfect TV):

Բոլոր բերված օրինակներում պետք է ասել ոչ թե **նրա մասին**, այլ **այն մասին**:

11. Հոլովառություն

«*Ըստ այդ ծրագրով*» (Ազատություն, հաղորդավար):

Պետք է լինի՝ **ծրագրի**:

«Սպասարկում է *ռևանշիստների պլանը*» (Վարուժան Ավետիսյան):

Պետք է լինի՝ **պլանին**:

«Չի կարելի արցախյան ընտրություններին խախտել, միջամտել» (1-ին հաղորդավար):

Պետք է լինի՝ **ընտրությունները...**

«Պետք է դա անել՝ առանց մտածելով հենց անձնական շահի մասին» (1-ին, հաղորդավար):

Պետք է լինի՝ **առանց մտածելու...**

«Նախագահը հաշվեհարդար տեսավ **ձեզանից**»:

Պետք է լինի՝ **ձեզ հետ**:

«Ինքը դրան չի խորշելու»:

Պետք է ասել՝ **դրանից...**

Ազատ Մաթյան
Ո՞րն է մեր հայրենին

Հեղինակային հրատարակություն

ISBN 978-9939-0-3749-3



9 789939 037493

Տպագրվել է «Զանգակ-97» ՍՊԸ-ի տպարանում

Տպագրությունը՝ օֆսետ: Չափսը՝ 60x84/16: Թուղթը՝ օֆսետ
Տառատեսակը՝ GHEA Mashtots: Ծավալը՝ 5 տպ. մամուլ

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23-25-28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

